Երեխայքին

սուրբ սանդղիկեան դպրոցի

ԼԵՈ
543

Կալկաթա
1850

# ԵՐԵԽԱՅՐԻՔ

## ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԴՊՐՈՑԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԵՒ ՇԱՐԱԴՐԵԱԼ

## ՅԱՇԱԿԵՐՏԱՑ ՆՈՐԻ՛Ն

'Ի ՊԱՏԻՒ

# ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ՅԱՐԳԵԼԻ 'ՕՆՈՂԱՑ՛Ն ԵՒ ՊԱՇՏՊԱՆԱՑ

'Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

1850:

Գ-28953-62

(43974-ин).

Зф. 545

543-60

# ԵՐԵԽԱՅՐԻՔ

## ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԴՊՐՈՑԻ

### ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԵՒ ՇԱՐԱԴՐԵԱԼ ՅԱՇԱԿԵՐՏԱՑ ՆՈՐԻՆ

'Ի ՊԱՏԻՒ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

## ԱՌԱՋԱԲԱՆ

'Ի ՀՈՎՏԱՑ Հայաստանի, 'ի հովտաց Հայաստանի, և 'ի ծաղկածին դաշտաց աշխարհի հաւաքեալ զառաւօտեալ ցօղս քաղցրութեան երկնից մեղուօրէն մատուցանեմք սիրելի Ազգի մերոյ՝ ԶԵՐԵԽԱՅՐԻՔ շարադրութեանց և թարգմանութեանց աշակերտաց Դպրոցի Սրբոյն Սանդխտոյ՝ որք սմօք ինչ յառաջ կացեալն 'ի Սիրելեաց ընկերութիւն. Եւ թէպէտև անքաջողելոց յուսաքէ. այլ դեռ տակաւին յանձինս մառ և բոլբոք պահելով զեռանդն ուսումնասիրութեան, ընդաբոյս ջանասիրութեամբ յայս վայր նկրտեալ հասին. Փառս տամք բարձրելոյն փառօք, զի ողորմութեամբ ամենակարող զօրութեան իւրոյ նորոգել կամեցաւ մեզ կրկին զդարն ոսկի, և հօտ փոքրիկ ազգիս մերոյ թառամելոյ 'ի Հնդկիս, ղուարթ զարուն գիտութեան ծաղկեաց վերստին, և նորահրաշ ծաղկեցոյց մեր առաջի զերկրորդ այս Արարատ 'ի մէջ օտար ազգաց՝ 'ի փառս 'ի պարծանս և յիշատակ նախկին հայրենի տան մերոյ. Քանզի բազմերախտ ջանիւք, առատաձեռն շնորհօք և անսպառ խնամածութեամբ ազգասէր բարերարաց ազգիս մերոյ, անկեալ հաստատուն տանց ազգային ուսման գրագիտութեանց չքեղացեալ բարգաւաճեն զհամբաւ գովելի ազգիս մերում. Եւ մեք աշակերտք դպրոցիս 'ի տրիտուր գթութեանց բարերար ազգասիրաց, որք բազում երախտիս և շնորհըս անձրևելով 'ի վերայ մերազգի դպրոցաց և ակն ունէին զտանել զծաղիկս և զքաղցր պտուղս 'ի նշան յուսոյ վերանորոգութեան Ազգիս. Ներքոյ ստորագրող աշակերտք Սուրբ Սանդուխտ Դպրոցիս նորատունկ և դալարաշիւղ այգւոյս ուսման, նուիրեմք երախտապարտութեամբ զնչին ինչ նուէր սակաւամեայ ուսմանց մերոց. ակն ունելով՝ զի պատուելի և ուսումնասէր ազգ մեր խակութեան հասակս ներելով և խամութեան ձեռաց մերոց, ծնողական գորովով ընկալնուլ ունիցի զայս 'ի հաճոյս իւր. զոր շատ համարիմք ամենեքին մեք.

## ՀՐԱՀԱՆԳ ՀԱՄԲԱԿԱՑ

ՈՒՍԱԼՈՒՄՆ արդարահայեաց նըպատակի դաստիարակութեան, վերանորոգութիւնք՝ զորոց պէտս ունի, և եղանակն՝ որով կատարելագործի՝ ընդ երկար սիրելի առարկայ կացին նոցա՝ որոց հաւատան թէ կացութիւն ընկերութեանն, և մանաւորապէս մեծագոյն մասինն, ընդունակ էր զարգացութեանն և յառաջադիմութեան հաստատուն սկզբանց, թէպէտև, կարի յոյժ յամրունց. Ո՛նչափ ազխութէ տակաւին զօրանայ 'ի վերայ այսր առարկայի. մանաւանդ 'ի մէջ որոց զանձինս կրթեալս համարեցան, Գործք հրատարակեցան արդարև՝, մանաւանդ 'ի վերջին ամսս՝ առաջացեալք ու զիղ և ընդարձակ տեսութեամբք, որք ետուն և տան միտաց զօրաւոր շարժմունս, բայց երկուեք առ հասարակ լուսաւորութեան ոչ կատարելագործին 'ի ձեռն դուզնաքեայ միոց, թէպէտև կորովաց և ճարտարաց, այլ պահանջեն զջան և վաստակս անհամար աշխատողաց ըստ զանազան կարողութեանց նոցա.

Զօրագոյնն հաղիւ կարէ առնել զփոքրիկ մասն յընդարձակ բովանդա-

կութենէ նորա ։ Ամենատկարն, որոյ բազուկն չլայեալ է փութաջան դիտաւորութեամբ, կարէ առնել սակաւ ինչ ։ Ապաքէն՝ պատճառ աւասիկ, թէ ընդէր իւրաքանչիւր ոք, որ փափակէ այնմ ինքնայօժար հաղորդիլ մենամարտութեանն ։ Եթէ սրտի մտօք կարիցէ հարկանել նա գէթ մի հարուած, ջանք այնպիսոյն ՚ի դերև ոչ ելանիցեն ։ Ներկայս ճառ՝ յառաջադիր գոլով ցուցանել, նախ՝ զյարմարութիւն բարձրացուցանելոյ զյարգ աստիճանի վարժապետին ՚ի միտս հասարակաց, (կամ այնոցիկ՝ որոց իրօք և բաշխաւորեալ իցեն ՚ի դաստիարակութիւն.) և երկրորդ՝ զմիջոցն, որովք այսպիսի յարգ յառաջ ընծայի, բաժանի յերկուս մասունս համեմատեալս այսոցիկ երկուց հատուածոց ։

Գլխաւոր դժուարութիւնն, որով հեղինակն՝ ՚ի խնդիր նորոգութեան կրթութեանն, ջանայ ընդդէմ ոգորել՝ է հասկացողութիւն բնութեանն ըստ ինքեան. և զորս առնել կարիցէ նա մարդկութեան ։ Եթէ ուղիղ գաղափարք արողութեան նորա միանգամ տպաւորեալ էին ՚ի միտս հասարակաց՝ որպէս զի կարէին մարդիկ հասկանալ զընդհանրութիւն պակասութեան ուսմանց իւրեանց, յառաջադիմութիւնք՝ որք այժմ ամ ըստ ամէ տարապարտուց հակէին ՚ի վերայ մտադրութեան նոցա՝ կարէին միանգամայն ՚ի գործ անդր մարմնանալ ։ Վերջինն՝ որ յուսացեալ լինի, կամ իրագի ՚ի բանասիրաց, կարէ յառաջ ընթանալ գործողութեք և վարժութեամբ ՚ի ջանից հասարակութեան կատարելով զդաստիարակութիւնն որպէս և զարուեստս հաստատեալս բնական գիտութեանց, վասն որոյ ջանալով հաստատել զօգուտն տալոյ զառաւել ընկերական մեծարանս վարժողական պաշտամանն, խնդրի ես նախ՝ ցուցանել թէ որչափ առաւել քան զոր հասարակօրէն կարծին, պարունակի ՚ի դաստիարակութեան անդ. որպէս և զաւակաւս ՚ի կարողութեանցն՝ որք ծառայեն մարդկային երջանկութեան ։ Բացատրութիւնք հարկաւորք այսմ դիտաւորութեան գրաւեն զմեծ մասն առաջին հատուածոյն, էականքն ուղիղ իմացուածոյ հետևելոցս, բաց յընթերցողաց անտի, որոց արդէն իսկ տուեալ են բաւականին մտածողութիւն զառարկայէն, զի թէ ոչինչ նորոգ ընծայէ այս ճառ ։ Բերումն այսոցիկ բացատրութեանց քաջայայտ լինի, և երբ պէտք լիցին ցուցանել թէ բարութիւն չէ չարութիւն դաստիարակութեան բովանդակապէս կախի ըզմտաց և զբարուց նոցին՝ յորոց և յառաջ տանի, կամ այլովք բառիւք թէ ընթացք դաստիարակութեան պարտ է համեմատիլ ընթացից վարժապետին ։ Երևի թէ աններգործութիւն ներկայ դաստիարակութեան ծագի անկատարութենէ՝ որոց ՚ի ձեռն յանձնեալ է այն, զի՝ հասարակութիւն երբէք ոչ զգայ զզօրութիւն ուսմանն, մինչև ոչ հանցէ ՚ի լոյս զդամարձակ իմն կատարեալ ուսուցչաց ։ Երևի մանաւանդ՝ զի եթէ դաստիարակութիւնն ստորագոյն իցէ քան զամենայն, ՚ի մասին յարմար հմտութեան, և ճարտարութեանն է միայն ՚ի բնական հետևողութենէ ստորին կացութեան նորա ՚ի հասարակաց կարծիս անդր, որ վրէպ կացուցանէ զամենայն ոք ՚ի մտանելոյ յայն, եթէ կարիցէ յանձն առնուլ զևս առաւել պատուական կոչմունս ինչ. այսպէս դարձուցանէ զիմացական կարողութիւնն յայլ շաւիղս ջանից, և քարշելով ոչինչ, բայց եթէ զտգիտութիւն տկարոց, և աղքատ ա-

կամայից ումանց ․ միայն գործն ․ որոց այլ պաշտամունք անհասանելիք են ։ Յորմէ զհետ գայ յիրաւի , թէ օգուտ ընկերութեան յաճումն բարուց և մըտաց յամենայն ճոխ և առատ օրհնութիւնս յառաջ բղխեալս ՚ի բարի դաստիարակութենէ անտի՝ անմիջապէս պահանջէ զբարձրութիւն պատուոյ ուսուցչաց յամենայն ընկերական դրութիւնս ։ 

Յանգղիականէն Ս. Կ. Ս.

## ԲՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ․

## ՀԱՄԱՌԱԿ ՅԱՏԿՈՒԹԻՒ՛ՆՔ ՄԱՐՄ՛ՆՈՑ

### Գլուխ Առաջին ․

Հ. Զի՞ՆՉ է բնական իմաստասիրութիւն ։

Պ. Բնական իմաստասիրութիւնն է այն արհեստ կամ գիտութիւն՝ որ խոկայ զզօրութեանց և զյատկութեանց բնական մարմնոց, և զփոխադարձ գործողութեանց նոցա ՚ի վերայ միմեանց ։

Ծանօթութիւն ։ — Առարկայ բնական իմաստասիրութեան՝ է ցուցանել զպատմութիւն երևմանցն՝ որք զտեղի կալնուն ՚ի մէջ բնական իրաց , այսինքն՝ ՚ի մէջ մարմնոց տիեզերաց ․ քննել զպատճառս և ներգործութիւնս նոցա ․ և անդուստ յառաջ բերել զայսպիսի կանոնս՝ որ զկնի պատկանին առաջնորդութեանց ։

Հ. Զ՞ինչ նշանակէ բառս երևակայութիւն ։

Պ. Նշանակէ երևոյթ, կամ առաւել ևս պարզութեամբ , զոր ինչ և ըմբռնին ՚ի զգայութեանց մերոց , այսպէս , անկանիլ քարի , շոգիանալ ջրոյ , լուծումն աղի ՚ի ջուր , ցայտիլն փայլական և այլն ․ ամենեքեան երևակայութիւնք են ։

Հ. Զ՞ինչ են գործք բարոյական իմաստասիրութեան ։

Պ. Ուղիղ յօրադրութիւն գիտութեան ընդհանուր յատկութեան անգործական մարմնոց ․ կամ ներքին գոյացութեանց ՚ի վիճակի կարծրութեանց հեղեղականութեան օդոց կամ կազից , և այնոցիկ , որք յօրջորջեցան աննուաճելի կամ երկայրին հեղանիւթք ։

Ծանօթութիւն ։ — Գործոյ բնական գիտութեանց պատկանի քննել ըզգործնական շարժմունս , զորս մարմինք ըստ զանազան վիճակի իւրեանց ներգործեն ՚ի վերայ միմեանց ․ և զզանազան պարագայս կցորդեալս շարժմանց նոցա ։

Հ. Զ՞ինչ նշանակեն բնական պատճառք ։

Պ. Բնական պատճառքն են միջնորդք որով արարածք յառաջ գան ՚ի գոյութիւն կամ յէութիւն իւրեանց ։

Ծանօթ ։ — Զ՛որ օրինակ Աստուած է պատճառ ամենայն արարածոց ․ քանզի ՚ի նմանէ առին նոքա զէութիւն իւրեանց , և աստուստ կոչի Աստուած վասն գերազանցութեանն , առաջին կամ գլխաւոր պատճառ ամենայն իրաց ։

Հ. Զ՞ինչ են երկրորդական պատճառքն ։

Պ. Երկրորդական պատճառքն են այնոքիկ , որք յառաջ բերեն զներգործութիւնս իւրեանց, ըստ հաստատեալ և նախկին օրինաց և կանոնաց դրօշմելոց ՚ի բնութեան իւրաքանչիւրոց յառաջին արարչութեանն յԱստուծոյ ՚ի սկզբնական պատճառէն ։

Ծան ։ — ՚Ի մէջ ամենայն պատճառաց՝ Նա է նախկին պատճառ , և հետևապէս՝ նկատմամբ առաջնոյ պատ ճառին ուղղակի անուանել կարեն սոքա երկրորդական պատճառք ․ այսպէս արեգակն պատճառ է զգոլորշիսն և գոլորշիկք պատճառեն զամպս , և

ամպք խստացեալք ածեն զանձրև, անձրև կազմէ զաղբիւրս, զգետս, ըզտունկս, և այլն. բայց տակաւին գործեն երկրորդական կերպիւ. 'ի ներքոյ նախկին ներգործութեան առաջին պատճառին։

Հ. Զիա՞րդ յառաջդայ գործն։

Պ. Գործն յառաջ գայ և շարժի ներգործութեամբ կամ զօրութեամբ ո՛ և իցէ բնական պատճառի։

Հ. Զիա՞րդ լուսաբանի վերոյ սահմանն։

Պ. Այսպէս. Գոլորշիք գործեն ձգողութեամբ արեգական, սառոյցն է գործ ցրտոյ. երևելութիւնն է գործ լուսոյ, և այլն։

Հ. 'Ի քանի՞ մասունս բաժանի իմաստասիրութիւնն։

Պ. 'Ի Բնագումս, որպիսիք են, 'ի գործնականս, յԱստղաբաշխութիւն, 'ի Ջրաբանութիւն, օդաբանութիւն կամ ոգեճառութիւն, Տեսաբանութիւն, և այլն, և այլն։

Թարգ. յԱնգղ.

Ա. Կ. Աիմճօն

## ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ մարդ կենդանի խնդրէ զերջանկութիւն, բայց բազումք խնդրեն զայն թիւր ճանապարհաւ, ուստի և ոչ գտանեն. համարին զի եթէ կարիցեն գտանել միջոցս լցուցանելոյ զամենայն փափագս իւրեանց, և եթէ կարիցեն ի ձեռս բերել զունականութի այնց միջնորդաց՝ լինելոց են յայնժամ յոյժ անվիշտ՝ անխռով կամ երջանիկ. Բազմաց 'ի մարդկանէ թոյլ տուեալ լինիս յաստուածային տեսչութենէ գտանել զորոց միանգամ զհետ որսան բեռնաւորիլ և կամ ծանրանալ ճոխութեամբ և պատուով և ամենայնիւ որ ինչ աշխարհս կարէ տալ նոցա. և յորժամ գտանիցեն զայս ամենայն, և աշխարհ ապուշ կրթի 'ի վերայ չքեղութեան և երջանկութեան նոցա. Սմանց յաջողմունք բարձրացեալ տապալելոց թոյլ տուեալ լինի կործանել զինքեանս. և նմա անթերի հրապարակել աշխարհի զթշուառութիւնս իւրեանց. և այլոց՝ որք ոչ գնան ցայնչափ երկարութեան՝ գնալ մինչ հաւանեցուցանել զամենեսին թէ իցեն թշուառական և անհանգիստ արարածք, ամբարձեալք գեր 'ի վերոյ հասարակ ժողովրդոց յապացոյց ապերջանկութեան իւրեանցքան զայլոցն ամենեցուն. Աշխարհ բեռնաւորեսցէ թող զսիրտս մարդոյ. բայց ոչ երբէք կարէ լնուլ զայն, Աստուած ոչ արար զնա վասն այսպիսի իրիք պատճառի. Սուրբն ցուցցէ մեզ զբարութի ոչ աշխարհն, ոչ մարմին, և ոչ դև՝ վասն այսր յոյժ անպատրուակ պատճառիս, զի չունին նոքա զբարի ինչ յանձինս իւրեանց. Որ ինչ մարդն գնայ զճանապարհ աշխարհիս այսորիկ և խնդրէ պարարել զհեշտասէր մարմին իւր՝ 'ի միաբանութեան ընդ սատանայի կայ. վասն որոյ և պարտ իսկ է լինել թշուառական նմա, Որ խոստանայ անձին իւրում խաղաղութիւն, բայց գտանէ և ոչ ինչ՝ մաշէ զինքն զհետ որսալոյ ստուերի միայն. և 'ի վերջոյ նստի ունայնացեալ, ճգնի նա ամենայն զօրութեամբ մարմնոյ և հոգւոյ իւրոյ շահել ինքեան զառանձնութիւն յընդհանրական ողորմելութենէ, և եթէ թողեալ զօրութեանց այնոցիկ միայն խորագոյնս ընկղմի բայց է տեսակ ինչ մարդկան յաշխարհիս որ ասէ, կարեն ցուցանել մեզ զայս բարի այսօրիկ կոչեն զինքեանս 'ի քրիստոնեայս և ցուցանեն առ մեզ զգիրս Աստուծոյ և զշնորհս Աստուծոյ, որպէս մի միայն աղբիւրս մխիթարութեան 'ի ցաւագին և 'ի սաս-

կալի աշխարհի այսմիկ խօսին ուղղութեամբ, զի եթէ աստուած ոչ կարիցէ առնել զմեզ երջանիկս, ստեղծուածք նորա ստուգիւ ոչ կարեն. և եթէ նա խոստանայցէ առնել այնպէս՝ որպէս և գտանեմք զի առնէ բանիւ իւրով՝ անտարակոյս հաւատալ պարտ է. և մեք չեմք ինչ խաբելոց: Ո՞ն ուրեմն քրիստոնեայք. այսուքիկ երջանիկ ոմանք. ժառանգեսցե՞ն զայս բարի. ունի՞ն զոգի գոհ. ե՞ն սիրտք նոցա յանդորրու. ուրախ լինին յաւիտեան: Այսու առանձնաշնորհութեամբ ուրախ լինիլ պարտին՝ որպէս ասացաք. բանիւ և շնորհօք. այսինքն՝ պարտին իսկ լինել այսպէս. բայց եթէ նայեսցիմք ՚ի նոսա՝ ո՞չ գտանեմք սիրտ ախտացեալ. զոգի խռովեալ և միտս ապերջանիկս: Երանի թէ կարիցեմք ասել զայս վասն փառաց շնորհացն. այսինքն՝ վասն պատուոյ աւետարանին. բայց այդ ոչ կարէ ասել: Բազում և բազմագոյն վարժապետք այնքան խռովեալ են. այնքան անստոյգ, և այնքան թշուառական, որքան և անհաւատք և անաստուածքն աշխարհի շուրջ զնոքօք, ո՞չ զի և ոմանք ՚ի նոցանէ ունին զտրտմութիւն՝ թէ և տեղի տան տրտմութեան զոր աշխարհ նպատակէ ձգել ՚ի նոսա. և ո՞չ են միայն ապերջանիկք որպէս և մերձաւորքն, Բայց անտարբեր և բազմաց ՚ի նոցանէ երևելին լինել այսպէս: Այսու ամենայնիւ աշխարհս բամբասէ զաւետարանն, որ չունի զաւելի տրտմութեան կամ ո՛ և իցէ թշուառութեան՝ քան թէ արեգակն խաւարի: Աւետարանն չունի ինչ ըստ տրտմութեան. բայց ջանայ ՚ի բաց տանել զայն զոր վարժապետք ունին, ոչ միայն յանձինս իւրեանց, այլ և յանձանց իսկ իւրեանց տան բարեպաշտութեան մերում խօթագին տրտմութիւնս և առնէն զամենայն շուրջ զիւրեամբք հեծեալս աստուածպաշտութեան: Խայտառակեն զճշմարտութիւն առանց առնելոյ զգործ ինչ պարտեաց կամ պիտանութեան անձանց իւրեանց՝ կրօնից իւրեանց կամ անձին ումեք, Հայեսցուք ՚ի նիւթ այսր և քննեսցուք զոմանս յարանց յայսցանէ, ըստ հանգամանաց նոցա. զի կարասցուք ցուցանել նոցա համառօտիւ թէ որպէս իցեն նոքա արտաքոյ ճանապարհի և կամ թէ ո՞ր իցէ ճանապարհ երջանիկ լինելոյ ՚ի թշուառական աշխարհիս այսմիկ: Բայց ինձ արժանէ ուղղել զիս ինքն նախ առ մարդն՝ որոյ սիրտ հաստատեալ կայցէ ՚ի վերայ երկրի: ԱՆԳՂԻԱՑԻՆԷՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՀՆԱԶԱՐ:

---

## ՃԱՌ

### Վասն Օգտի Դաստիարակութեան.

Արժա՞ն իցէ ինձ աստանօր ՚ի գովեստ զինչութեան և արգասեաց դաստիարակութեան կամ դպրոցական կրթութեանցն մանրամանել առաջի ձերոյ իմաստութեան Վ. ԵՀ Հանդիսականք, որով ազգք կրթին և թագաւորութիւնք: Արժա՞ն իցէ ճառել ինձ զլաւութենէ գրոց գիտութեան, յորմէ ունել մեզ կեանս Քրիստոս խոստանայ կենարարն աշխարհի, և լոյս սփռի յազգ մարդկան: Արժա՞ն իցէ փծուն և փանաքի թոթովանօք մերկապարանոց առնել ձեզ թէ սովաւ թագաւորք թագաւորեն. և հզօրք զերա՛ ունս կարգեն աշխարհի: Հայեցարո՛ւք հանդիսականք մին դէպ ՚ի նախնիսն մեր, և յայտնի իսկ տեսանէք զի հանճարեղութեամբ և լուսաւորութեամբ գիտութեանց իւրեանց զարդարեալ պայծառացուցին աշխարհս ամենայն. և սփռեցին զարհեստ և զճարտար գիտութիւն յորդիս և ՚ի թոռունս իւրեանց՝ որոց ոմանք աստուածային ճշմարտութեան հետևելով խաչակիրք եղեն յերկրի աստ քաջութեամբ մարտնչելով ընդ անօրէն կռապաշտիցն. և յաղթելով իսկ նոցա՝ լուսաւորեցին զընդհանուր ազգս մարդկան: Ոմանք ճշմարիտ կրօնից կազդոյր տալով՝ յարգեանց անտի իւրեանց կառուցին դպրոցս և զեկեղեցիս: Սա՝ զհանդերձին անկուած հնարելով, նա ըզբուսոց զօրութիւն փորձելով եղեն մարք բժշկութեան և տնտեսութեան. և հարք արուեստին աստղաբաշխութեան, քաղաքականութեան, ճանապարհորդութեան և այլոց պիտանի իրաց. որովք և եղեն երանելիք՝ գովելիք՝ և յիշելիք դարուց ՚ի դարս: Որպէս զարեգակն փայլուն լուսատու եղեն աշխարհի ցուցանելով զճանապարհ ճշմարտութեան

և արդարութեան, Ապաքէն որքան երջանիկ, գովելի, երանելի և վեհափառագոյնս արար զնոսա գիտութիւն իւրեանց, որոց ջանս միաբանութեան և սիրոյ 'ի մէջի ունելով զխնամս Աստուծոյ յինքեանս բռնաբարեցին. Բայց արդ՝ աւաղիմ ճառել զի 'ի բազմնաւ անօրէնութեանց մերոց ցամաքեցեալ է արդարև սէր ազգային, սէր ուսման իսպառ հեղգացեալ, և պատերազմաւորութիւնն դադարեալ մինչ յայս վիճակ, յորում պարզ երևի կործանումն յոյժ եղկելի և ցաւագին. Ապաքէն խլեսցուք 'ի բաց զգժնդակութիւն ախտից մերոց, արմատաքի հանցուք զմոլորութիւնս, և դիտեսցուք թէ քանի՜ հոգեկան և մարմնական բարիք բուսանին 'ի գիտութենէ. — Գիտցուք թէ ուսումն և գիտութիւն անպիտան համարելի այժմ առ 'ի նպաստ աշխարհական կենցաղավարութեանց մերոց, տակաւին տառապատիկ աւաւել հարկաւ պահանջի այն յամբողջութիւն սուրբ եկեղեցւոյ մերոյ՝ Առաւել ես օգտէ մարմնական կենցաղոյս որ տայ մեզ զազնիւ վարս, պանծալի վիճակս, զբարս քաղաքականութեան, և զայլ ամենայն մարմնօգուտ վիճակս, Ո՛հ հապա ըստ ամենայնի ջանասցուք սերմանել զսերմն բարի ուսուցանելով զշաւակունս, և առհասարակ ջանասցուք շինութեան ազգային դպրոցաց. Օրինակ կալցուք զազգասիրութեան փքանելի նախահաց մերոց 'ի հնդիկս բնակելոյ. որք վաստակեցան զճեմարանն շնորհել ազգի մերոյ, զովեսցուք և զջերմեռանդութիւն ժամանակին իշխանաց և բարերարաց՝ որք անխնայ մատակարարեցին զաուրս առատս իւրեանց 'ի շինութիւն նորա. Բայց արդ ուր իցեմք Յարգոյ հանդիսականք. և ուր զորո՞յ խօսիցիմք. 'ի Մարդասիրականն Ճեմարանի՞ անդ. — Այո՛, եթէ ոչ 'ի նա, այլ տակաւին ս'ի մարդասիրագունին կամք և խօսիմք զդպրոցէ Սրբոյն Սանդխտոյ՝ դստեր Սանատրկոյ մեծի արքայիս և քեռ Թոռանն նախահաւ ատ Թագաւորիս մերում Աբգարու, Այնմ՝ որ 'ի բաց եդեալ զփառս տիկնութեանն, վկայակից առաքելոցն Թադէոսի եղև, և նախախայծ պտուղ խաչին Քրիստոսի. Զորոյէ յանուն նորա կառուցելոյ խօսիմք, որ ա՛ռաւասիկ մտանէ 'ի հինգերրորդ ամն լինելութեան իւրոյ՝ 'ի փառս ազգիս Հայոց. — Հա՛. գոյն երեաց ձերոց շրջի ընդէ՞ր պատուելի՜ հանդիսադիրք. մի՞ գուցէ թէ խիղճ մտաց ձերոց հարկանէ զձեզ, զի լքեալ և ամայի թողաւ այս տուն ազգային, այս դպրոց մանկանց ձերոց, այս խոնարհ հանդիսարան ազգասիրութեան և աստուածսիրութեան, Մի՜ և մի՜ աղաչեմ տրտմեսջիք 'ի տօնիս մեծի. զի ձեր և ձեօք կայ և մնայ հաստատութիւնս, Պատիւ և Յարգութի՜ւն արդարև բարեպաշտ անուանց զերապատիւ Տիկնացն Մարիամու և Թագուհւոյ քերց, որք արդարև դրուատեցան զոլ Մարք արդի գրագիտութեանս, որք ցանկացան լուսաւոր պայծառութեան ազգիս մերոյ և նախ առաջին հանդիսացան 'ի խնամածուհի սորուն, զձեռն օգնականութեան կարկառելով առ սա 'ի հեռուստ անտի, և զայն 'ի ժամանակին՝ յորում յամէն ուստեք կուսէ դղրդէին հիմունք սորա. ըստ ներելոյ վերին խնամոյն. Վասն որոյ և մեք անհուն շնորհակալութիւնս մատուցանելով Պատուելուհեացն 'ի տրիտուր բարերարութեայն՝ մաղթեմք յԱստուծոյ զի որք յախարհի յուսով սերմանեցին զբարին՝ գտանելոյ իցեն զօգուտն բազմապատիկ. ընծայեցուցեալք զինքեանս արժանիս պատուոյ երանութեան և մեծարանաց. Ճանաչեմ այո՛ և զուրոյն ուրոյն ձեր վաստակս բարիս, ո՛ ծնո՛ղք և պաշտպանք հաստատութեան այսորիկ, խոստովանիմք այո՛ և զնուանդն զՆախահօր հաստատութեան դպրոցիս, — գիտեմ զամենեցուն ձեր զսէր առ հանճար և գիտութիւն յօգուտ հասարակաց՝ ըստ իւրաքանչիւր արժանեաց. սակայն և այնպէս խոնարհամտութեամբ խնդրեմ 'ի մեծապատիւ Տիկնաց և Պարոնայդ ըստ ամենայնի ջանալ վասն օգտի և պայծառութեան ազգիս 'ի ձեռն կրթութեան ազգային դպրոցաց, որով միայնով ծաղկի ազգն և շինի չքեղ ժողովուրդ. հանճարեղ՝ ճար[illegible]ար և գիտական 'ի վերանորոգութիւն հայրենեաց և 'ի պարծանս հանդերձեալ դարուց. —

Յունիս

Յ. ՇԱՀՆԱԶԱՐ.

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՑ

ՅԱՂԱԳՍ ԱԿԶԲԱՆ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՈՑ.

Հարց. Ո՞յք էին նախկին Հռովմայեցիք.

Պատասխան. Բնակիչք հնոյն Հռովմայ, գլխաւոր քաղաքին Իտալիոյ. որոյ պատմութիւն լի է օգտակարագոյն և սքանչելի դիպուածովք.

Հ. Ասոյն էր սկիզբն Հռովմայեցւոց.

Պ. Սերունդք էին յԷնէասայ Տրովացի իշխանի, որդւոյ Վինուսայ և Անքիսէսի. որ փախեաւ ընդ սակաւ հայրենակից ընկերաց իւրոց 'ի բորբոքմանէն Տրովիոյ, յորժամ հրդեհեցաւն 'ի Յունաց. և գնի հաս յԻտալիա. ուր սիրով ընդունեցան 'ի Լատինոսէ յարքայէ Լատինացւոց, որ ետ Լինէասայ զդուստր Լաւինիա յամուսնութիւն,

Հ. Ո՞վ էր Վինուս,

Պ. Առասպելեալ աստուածուհի Գեղեցկութեան, որ 'ի հեթանոսական Առասպելաբանութիւնս, ասի ծագեալ 'ի փրփրոյ ծովու.

բաշն, ծամածռէ զկնճիթն, և ի նշան մախանաց՝ ցուցանէ զզօրաւոր ժանիս իւր։ Աչք նորա այնքան պայծառք են, մինչ երևել թէ հուր հոսեցուցանեն յինքեանց։ Թափառի ի մէջ անտառաց. երբեմն մանչէ այնչափ մեծաձայն՝ մինչ հնչէ իբրև զորոտ հեռաւոր։ Սնի ի մացառախիտ թաւուտս՝ ուր այծմունք, գոմէշք և այլ կենդանիք սովորաբար յաճախեն վասն ուտելեաց կամ ըմպելեաց. և յորժամ մի ի նոցանէ մօտ իցէ, ոստնու ի վերայ կատաղի յարձակմամբ և ունի զնա ահագին ճիրանօքն։ Ապա յօշոտէ զնա 'ի մասունս և կլանէ երբեմն ոսկերօքն հանդերձ։ Սովորաբար խնդրէ զորս իւր ի գիշերի. և է խորամանկ և գաղտակողի իբրև զկատու՝ ի դարանել իւրում որսոցն։

Բնիկ է առաւելապէս Ափրիկոյ և հարաւային կողմանց Ասիոյ։ Հասարակ է յԱփրիկէ քան յԱսիա. ի ջերմ գաւառս զարգանայ ցմեծ ինչ քանակ, և ցուցանէ զկատաղի բնաւորութիւն։ Կենդանի ինչ գտանի 'ի հարաւային Ամերիկոյ՝ որ կոչի Առիւծ. բայց սեպհական անուն նորա է Պիւմա կամ Կուգար. երբեմն կեայ կենդանիս ցմեծ ինչ հասակ։ Մին՝ Պօմպէ անուն սատակեցաւ ի Լոնտոն յամի 1760 ի հասակի եօթանասուն ամաց։ Թէպէտև քանակ կամ բարձրութիւն Առիւծու ոչ զանցանէ առաւել քան զեղջերուի. բայց ծանրութիւն նորա է շատ մեծ, Այս ծանրութիւն ծագի ի շատ պինդ և ուժեղ կազմուածոյ նորա. ոսկերք նորա կարծրք են և զօրաւորք. մկանունքն մեծ և խիտք. փոքրագոյն մասն քանակի նորա միայն է մարմին. իսկ մնացեալ մեծագոյն մասնն կայանայ յոսկերս և ի մկանունս առաւել քան որ և իցէ այլոց կենդանեաց։ Մատակն փոքրիկ է յոյժ քան զԱրուն, բաշ ոչ ունի, սակաւաժուժկալ է և ամեհի բնութեամբ։ Կորիւնք առիւծուց քանի մի շաբաթական հասակօք՝ հազիւ հասանեն ի չափ սկնդկաց, և են անմիտք, գեղեցիկք և խաղասէրք որպէս զձագս կատուի։

Հասարակաց եղև համարել զբազում վեհանձնական ձիրս Առիւծու. և առ ի զարդարել զայսոսիկ խայծս բարուց՝ անթիւ պատմութիւնք 'ի վեր եղեն։ Յորժամ տեսանեմք զԱռիւծն ի գառագղի, իւր ծանրաշարժ և ազնիւ կերպարանքն հեշտութեամբ կարեն հաւանեցուցանել զմեզ 'ի հաւատս նոցուն. Բայց զմտաւ ածել պարտիմք թէ ընդերկար ժամանակաւ բանդարկութիւն նորա ի գառագղին՝ կորուսեալ իցէ ըստ մասին ի բնաւորութենէ՝ որով երևի նա յանապատին. ուր թէպէտև նկարագրի ի ճանապարհորդաց իբրև արենարբու և կատաղի գազան ինչ. սակայն է նենգամիտ, երկչոտ. և չարարուեստ կենդանի. որ գաղտագողի յարձակի ի վերայ որսոցն իբրև զկատու. և բազում անգամ ետ ընդ ետս կրնկի յահէ մարդկան։ Առիւծն առաւելապէս բնակի յանապատս Ասիոյ և Ափրիկէոյ. և միշտ գտանի 'ի տեղիս՝ ուր իցեն հօյլք վայրենի այծեմանց և այլոց չորքոտանեաց արածողաց 'ի միասին։ Առիւծն զհետ երթայ ջոկաց այսոցիկ, և յօշոտէ զնոսա գիշեր գիշերի։ Յարձակի նաև 'ի վերայ գոմշոց. և այնքան է զօրութիւն նորա՝ մինչ հեշտեաւ սպանանել զնոսա. և առարկայ անդադար երկիւղի լինել այսոցիկ կենդանեաց։

Համարեալ է ի դողդոջմանէն արջառոց՝ յորժամ առիւծն մօտ մատչի նոցա, թէ զհոտ առնուլ կարեն զնորա ի բաւական հեռաւորութենէ։ Որ ինչ և իցէ՝ կարողութիւն նորա ըստ ծանօթութեան՝ է մեծ յոյժ՝ որպէս յայտնի

է. զի ոչ կարէ հեշտեաւ առնուլ զսա-
ստ և զայլ չորքոտանիս լոկ ուժովն.
Բնական երկիւղ ստեղծուածոց ՚ի վերայ
որոց յարձակի Առիւծն՝ ծագի միշտ
՚ի սուր տեսութենէ և ՚ի սաստիկ հո-
տառութենէ նոցա, որով խոյս փո-
խադրեն ՚ի սակաւ ինչ հեռաւոր կող-
մն. Նախքան զհասանել կործանչին,
Առիւծն՝ որպէս և վագրն և այլք ՚ի նոյ-
նատեսակաց, հազիւ վազ առնու. այլ
գնայ. սողայ կամ ՚ի վերայ սոտնու սա-
կաւ ինչ հեռաւորութե՝ այլ մեծաւ յար-
ձակմամբ. Վասնորոյ յայտնի է, թէ
պիտի գոլունի ունել նմա զորս իւր. զի
չէ յարմար աշխար յարձակման. Եր-
կարև զօրութիւն նորա է մեծ յոյժ,
միաւորեալ ընդ մեծի հնարագիտու-
թեան և խորամանկութեան ՚ի գործա-
ծութեան նորուն. Առիւծն կամի
տասն և հինգ լոտրս մսոյ ՚ի կերակուր
իւր՝ յամենայն աւուր. Եւ որովհե-
տև նախադասէ զմիս անասնոց նորոգ
սպանելոց, և հազիւ բերի ուտել եր-
կրորդ անգամ ՚ի նոյն գիշոյ՝ յայտնի է
թէ կոտորածն՝ զոր առնէ ՚ի մէջ այծե-
մանց և այլոց անասնոց գիշատելեաց՝
անհարին է յոյժ. Եթէ զմտաւ ա-
ծիցեմք զմահ միոյ յայսցիկ անմիտս
ստեղծուածոց, բռնութիւն երկիւղին
յորժամ լսէ զոտնուլ թշնամւոյն,
տագնապն՝ յորժամ զգայ զբուռն հա-
րուածն նորա. և զմահաբեր երկունս օր-
հասին յորժամ փողն սաստիկ պնդի ՚ի
մէջ ժանեաց հրեշին, ոչ կարեմք բայց
զարմանալ ընդ չափ չարչարանացն՝ որ
հարկաւոր է ՚ի պահպանել զայս Թա-
գաւոր անտառաց յընթացս կենաց՝ որ
երբեմն ձգէ ցեօթանասուն ամ. բայց
եթէ հայեսցուք դարձեալ, նշմարել
կարեմք զնոյն անցս շուրջ զմեօք ըստ
փոքրագոյն չափու. կատուն զմկնոյն
կոկիծ և կոտորած ածէ թռչնոց և մը-
կանց. և է այնքան անյագ և արիւնաուշտ
ըստ չափու քանակին, որքան է Ա-
ռիւծն ինքնին. Իւրաքանչիւր ոք ա-
պաքէն ընդել է, կարդալով կամ լսե-
լով, մենջման Առիւծու. Որ է ձայն
երկիւղալից և արտադրէ զահաւոր ներ
գործութիւնս. Ասի ՚ի ճանապարհորդաց
թէ երբեմն նման շառաչման լսելոյ
՚ի ժամանակի գետնաշարժութեան. և
թէ արտադրէ զայս նորանշան ներգոր-
ծութիւն դնելով զգլուխն ՚ի վերայ
գետնի, և հանելով զկիսախեղդ ձայնն,
որով ձգի երկար ընդերկիր. Իսկոյն
ընդ լսելն լինել ահագին ձայնիս ՚ի
կենդանեաց, որք հանգստանան ՚ի դա-
լարայրս՝ զահի հարեալք ՚ի վեր ոստ-
նուն և խուսափեն յամենայն կողմունս.
Եւ երբեմն դիմեն նոյն իսկ ՚ի վտանգ՝
յորմէ զերծանել խնդրէին. Առիւծն,
որպէս և ամենայն կատուատեսակ գա-
զանքն՝ առնէ զորս իւր ՚ի գիշերի. վասն-
որոյ հարկաւոր է նմա ունել զգործա-
րան տեսութեան ըստ ամենայն կենդա-
նեաց՝ որք խնդրեն զկերակուր իւրեանց
՚ի խաւարի. Սովորաբար աչք են մեծա-
քանակք վասն տեղի տալոյ մեծագու-
մար շառաւիղաց լուսոյ. Զօրութիւն
տեսանելոյ ՚ի խաւարի՝ զոր կատուատե-
սակք ունին, երևեալ է միշտ առար-
կայ իմն զարմանեաց, և բնիկ է այդմ
այդպէս լինել. քանզի մարդն բաղում
դժուարութեամբ տեսանէ ինչ ՚ի խաւա-
րի քան զայլ կենդանիս. և փոխարէն
ունի ՚ի կարողութեան իւրում յառաջ
բերել զարուեստական լոյս ՚ի կեն-
դանեաց և ՚ի մոմեղինաց. Իսկ այս մաս-
նաւոր տեսակ աչաց հարկաւոր է Ա-
ռիւծու ՚ի տեսանել զորս իւր առ որ
սողայ այնպիսի աներկբայութեամբ՝ զոր
ոչ ինչ՝ բայց եթէ այս պայծառ գիշե-
րական տեսութիւնս կարէ տալ. Նկա-
տեալ իցես թերևս թէ զինչ իցեն սա-

վարաբար կոչեցեալքն բեխք 'ի վերին շրթունս կատուի։ Պիտանութիւն այսոցիկ յընթացս բնութեան շատ հարկաւոր է. զի են գործարանք շօշափման։ Թեթեւակի հպաւորութիւն բեխիցս գշրջապատեալ առարկայիւք՝ կարի սուր զգալի լինի 'ի կենդանւոյն արտաքս, զի եթէ և ձարք ըստ ինքեանց անզգայք իցեն, սակայն արտաքս ցցին յիւրաքանչիւր կողմն դնչի առիւծուն, որպէս և հասարակ կատուի, որպէս զի 'ի ծայր հաւասարիցին չափու թանձրութեան մարմնոյ կենդանւոյն։ Սանայնորիկ եթէ ածիցեմք զԱռիւծն սողալ ընդ թաւուտ ինչ անտառի անկատար լուսով, միանգամայն տեսանել կարեմք զպիտանութիւն ձիգ ձարիցս այսոցիկ. որք ցուցանին նմա նուրբ ազդեցութեամբքն զոր և իցէ խութ կամ խոչ՝ որք յառաջ ընծայեն անցից մարմնոյն։ Արգելուն զսօսաւիւն թփոց և տերևոց, որք տային զգուշութիւն որսոյ իւրում, եթէ փորձէր անցանել ընդ մէջ խիտ առ խիտ մացառաց։ Եւ այսպէս միաւորեալ սոցա կակուղ թաթից ոտիցն կարողացուցանեն զնա շարժել առ 'ի զոհ իւր անշշունչ հանդարտութեամբ՝ քան զօձին որ սողայ ընդ սէզ և ոչ տեսանի մինչ գալարի շուրջ զհինցեալ որսովն։ Զայս օրինակ անցից ընդ յոյժ հիանալի ուղխութեն Առիւծու՝ ցուցանէ զկազմութիւն նորա յայտնապէս տնօրինեալ վասն կործանման կենդանական կենաց։ Ծանուցի թէ մռնչիւն՝ որով յարուցանէ զորս իւր, աչքն որով տեսանէ 'ի խաւարի, զգայուն բեխքն, և մալից թաթք ճիրանացն՝ որով սողայ 'ի վերայ առանց աղմկի, և մեծ բնական կարողութիւնն՝ որով ոստնուլն 'ի վերայ որսոյն կատարի, կարէին ծանուցանել նաև զզօրաւոր ճիրանսն որք են գործիք հարկանելոյ նորա զորս իւր՝ զզօրաւոր ատամունս նորա՝ զահաւոր ժանիսն որով կարէ փշրել զոսկերս եղանց կամ գոմշոց, և լեզուփշուտ՝ որով 'ի բաց լիզէ զմիս յոսկերաց։ Այս ամենայն յատկութիւնք ձեւացուցանեն զմասն վիճակի կենաց Առիւծու, և պիտի պահել 'ի մտի՝ թէ նոյն բնութիւն կերակրոյն ունի զհակամիտութիւն անփոփոխ պահելոյ զբարս նորա առ 'ի տանել կարելոյ զմեծ մկանական զօրութիւնն և 'ի հանապազօրդել զարիւնռուշտ բնաւորութիւնն։ Որքան առաւել տարածեմք զքննութի կենդանեաց, որքան առաւել զարմանամք ընդ այս հիանալի պաշաճաւորութիւն մասանց կենդանի մարմնոց յառաջին պէտս իւրեանց՝ այնքան ևս կշտամբիմք յանկատար գիտութեանց մերոց, որ առ կատարելութիւն իմաստութեան և զօրութեանն՝ որոյ գործք այսպէս են զարմանալիք, որպէս և անսահմանք են։

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Խ. Թ. ԱՒԵՏՈՒՄ.

---

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հ. Յո՞ր մասն երկրի անկանի գաւառն՝ որ պարունակէ զսահմանս նախնի Յունաստանի։

Պ. Սահմանք նախնի Յունաստանի պարունակէին զայն հատուած երկրի՝ որք 'ի հնումն հաստատէին զհարաւային կողմն Եւրոպական Տաճկաստանի։

Հ. Որքա՞ն էր նորա տարածութիւնն։

Պ. Յունաստան էր իբրև 350 մղոնօք երկայն 'ի հիւսիսոյ ընդ հարաւ, և նորա միջասահման լայնութիւնն իբրև 250 մղոն, լինելով փոքրագոյն տարածութեամբ քան զԱնգղիա։

Հ. Ի՞նչ էր նախնի անունն նորա։

Պ. Կոչէր 'ի նախնի բնակչաց իւ-

րոց՝ Հելլաս, և ժողովուրդք կոչէին Հելլենացիք. 'ի Հռովմայեցւոց կոչէր Գրեկիա, բայց և 'ի մէնջ Յունաստան։

Հ. Յորո՞ց կայանայր նախնի Յունաստան։

Պ. Նախնի Յունաստան կայանայ 'ի զանազան սահմանաց կատարելապէս անկախ ելոց զմիմեանց. և թէպէտև ամենեքին որոշէին սիրով ազատութեան և քաջութեան, սակայն գլխովին հակառակք էին իրերաց բարուք և վարուք իւրեանց։

Հ. Ո՞րպիսի էր օդ և պարարտութիւն երկրին Յունաստանի։

Պ. Օդ Յունաստանի էր մանաւանդ որպէս գերազանց՝ միօրինակ ազատ գոլով 'ի սաստիկ ցրտոյ և 'ի տօթագին ջերմութենէ, և պարարտութիւն երկրին համեմատէր ընդ կլիմային առատութեամբ յառաջ ածելով ոչ միայն զբոլոր պիտոյս, այլ նմանապէս և՛ զբազումս 'ի զուարճալեաց կենաց։

Հ. Ժողովուրդքն բաժանորդ եղե՞ն ազդեցութեան այսպիսի յարմար և առատաբաշխ օդոյ։

Պ. Այո՛, եթէ դատեսցուք զնոսա 'ի գործոց իւրեանց ստուգապէս արարին։ Բազդրութիւն և մաքրութիւն կլիմայից երևէին ունել հզօր իմն ներգործութիւնս 'ի վերայ այնոցիկ, որք ծնան և սնան անդ. վասն զի՝ ոչինչ երկիր 'ի վերայ աշխարհի ցուցանէր երբէք զմարդկային դրութիւն զարդարեալ այնպիսի կատարեալ գեղեցկութեամբ, կամ զմարդկային միտս պայծառացեալ այսպիսի հազուագիւտ կատարելութեամբք։

Հ. Յո՞ր գործ Յոյնքն գերազանցեցին։

Պ. Նախնի Յոյնք, յորժամ 'ի յաջողութեան՝ զանյանէին զամենայն քաղաքական արհեստիւք և զամենայն շառաւիղօք գիտութեանց։

Հ. Կա՞ն ներկայ վկայութիւնք յաջողութեանց նոցա։

Պ. Այո՛, գործք նոցա 'ի փիլիսոփայութեան, յերկրաչափութեան, 'ի քերթողութեան, 'ի ճարտարախօսութեան, և յայլ ամենայն տեսակս շարադրութեան, 'ի քանդակագործութեան և 'ի ճարտարապետութեան, որպիսիք ոչ էին երբէք, և հաւանականաբար ոչ երբէք լիցին, կատարելագոյն օրինակք են՝ յառաջ ածելք 'ի մարդկային հանճարոյ։

Հ. Արդիւնք նոցա փակեալ էի՞ն միայն յայսոսիկ շառաւիղս մարդկային գիտութեան։

Պ. Ո՛չ մարթի ոչ, նոքա շարժեցան, որպէս և՛ յառաջն նկատեցի, հոգւով ազատութեան և անհամեմատ քաջութեան, և թէ հայեսցուք 'ի մեծամեծ որեարս նոցա, որպիսիք են՝ օրէնդիրք, քաղաքավարք կամ զօրապետք գտանեմք զմեծագոյն պատճառս զարմանալոյ 'ի վերայ առաքինութեանցն և մտաց։

Հ. Ապա ուսումն պատմութեան Յունաց շահ մեծ լինի՞ մեզ։

Պ. Անշուշտ մեծապէս պիտանի է, և որ ոք ցանկայ գերագոյն զանազանութեան որպէս փիլիսոփայ մարդ, կամ ճաշակաւոր քաղաքավար ոչինչ օրինակաւ կատարէ զկամս իւր՝ քան թէ մտադիր ընթերցանութեամբ պատմութեան Յունաց։

Անգղիարէնէն

Ս. ԲԻԺԱՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՆԳԱԼԱՅ.

ԲԱՆԳԱԼԱ է այն բաժանումն Հնդկաց՝ ուր Բանգալցերէնն խօսի և գրի. Սնի զծով 'ի հարաւոյ. ընդ հիւսիսոյ

և ընդ յորս եւս սահմանեալ է լեռամբք և անտառովք, որ մանաւանդ գաւառքն բնակեալ են բազմաթիւ մայրենեօք՝ որ ոչ ընկալան զՀինդու կրօնն. Թուի պարունակել մերձ երեսուն միլիոնս բնակչաց. նախկին պատմութիւն Բանգալայ մթին է յոյժ. ոչ կարեմք ասել թէ երբ Հինդու հաւատն առաջինն սկսաւ քարոզել անդ. Կարծի թէ առաջին բնակիչք ոչ էին Հինդուք այլ ՚ի նոյն զարմէ՝ յորոց էին և լեռնաբնակքն արեւմտից. Երբ Բրահմանքն եկին անդ. ընդ ինքեանս բերին ըզՀինդու կրօնն. որպէս Մահմետականքըն զկրօնն Մահմետի. Ոչ կարեմք ասել թէ երբ ներկայ Բանգալացերէնն ըսկիզբն էառ. Գտանեմք ՚ի նմա զբազում բառս՝ որք ոչ Սանսկրիտ են, ոչ Արաբիկ և ոչ իսկ Պարսիկք. վասնորոյ կարծեմք թէ էր անդ նախկին լեզու ՚ի կիր առեալ ՚ի նախկին բնակչացն՝ որ կորուսեալ է այժմ. Արդեան բանգալի տառքն են՝ որպէս Նագրին. միայն փոքր ինչ զանազանութբ ձեւոյն.

Կարծի թէ Գօռն լեալ իցէ հնագոյն քաղաք Բանգալայ. Ոմանք ասեն եւս՝ թէ շինեալ իցէ աւելի քան զերկու հազար հինգ հարիւր ամօք յառաջ. յորմէ բոլոր երկիրն երբեմն կոչէր Գօռերա. Գօռն անկանի ՚ի հիւսիսոյ Բանգալայ. Մայրաքաղաքն Արեւելից Բանգալայ է Սունարգօնգ, կամ Սուվրնագրամ, իբր ութն մղոնօք հեռի յայժմեան քաղաքէն Դաքայ. ՚Ի Հնագոյն ժամանակաց այս մասն Բանգալայ հռչակեալ է ՚ի սակս ամենանուրբ բեհեզեաց իւրոց. զորս իբրև 1800 ամօք յառաջ բարձեալ տանէին յԵւրոպիա՝ ՚ի մեծ քաղաքն Հռովմայ, ուր և մեծագնի վաճառեալ կոչէին ՚ի Հռովմայեցւոց անուն [illegible]՝ ([illegible]) որ է բուն բանգալի բառ նշանակէ զկտաւ. Չէ արտաքոյ հաւանութեան թէ նաւքն վաճառականք յայս վաճառ՝ եկանէին ՚ի վերայ գետոյն Գուդմայ ՚ի Սունարգօնգ վասն գնելոյ զնոսա.

Գլխաւոր քաղաքն ընդ արեւմտաս Բանգալայ՝ էր Սաթգօնգ. ոչ կարի հեռի ՚ի հիւսիսոյ Հուգլեայ՝ ծանուցեալ Հռովմայեցւոց. Յիշի և ՚ի Պուրանս՝ որպէս Սպտագրամ. կամ Եօթն գիւղ. և էր մեծ նաւահանգիստ Բանգալայ՝ առ որ գրեթէ ամենայն ծովածին վաճառք բարձեալք բերէին. Բոլոր այս երեքին քաղաքք՝ Գօռ. Սունարգօնգ, և Սաթգօնգ, այժմ միանգամայն աւերակք են.

Հնգետասան հարիւր ամօք յառաջ Բանգալայ էր մասն մեծի Կայսերութեան Մագաթայ, որ է այժմ հարաւային Բահար. որոյ Մայրաքաղաք կարծի լինել Պողիբոթրա կամ Պատալիպուտրա. յորմէ մի և նոյն համարեալ ընդ Փաթնայ. Յետոյ անկման իշխանութեան Մագաթայ՝ յաջորդէր հարստութիւն Թագաւորացն՝ որ կոչէր Պալ, աղանդոյն Բուդդայ, որք տիրէին ՚ի Բանգալայ. բայց թէ արդեօք համօրէն երկրին՝ և թէ մասին՝ չէ յայտ. Առաջնորդ այսր գերդաստանի եթող զկնի իւր զարձան մեծ յիշատակի թագաւորութեան յընդարձակ Լճին Մահիպալ Դիգգի անուն ՚ի գաւառին Դինաջփորայ. Կարծի թէ յետ Պալեան հարստութեան յաջորդեաց իշխանութիւն Սենաց. որք էին վերջինք ՚ի Հինդու թագաւորացն Բանգալայ. այլ պատմութիւն նոցա մթին է յոյժ.

Ըստ աւանդելոյ Հնդկաց՝ Ադիսուր էր առաջնորդ Սէն գերդաստանին՝ որ թագաւորեաց յամին՝ 1036. այն է՝ պակաս քան զութն հարիւր ամօք յառաջ. Ասի յոմանց թէ զզուեալ նորա

ընդ բրահմանս Բանգալայ վասն ոչ իմանալոյ նոցա զպարտիս կրօնի իւրեանց՝ հալածեաց զնոսա ։ Այլք ասեն, թէ յընթացս իշխանութեան Բուզդխտրիկ թագաւորացն Պօղեանց՝ բրահմանքն սպառեցան ։ և Ադիսուր առաքեաց առ թագաւորն Կանուջայ և աղաչեաց զնա առաքել զհինգ բրահմանս բարւոք կրթեալս 'ի շաստրայս՝ որ արար այնպէս ։ Բրահմանքս այսոքիկ բերին ընդ ինքեանս ծառայս հինգ, յորոց բարձրագոյն ցեղք բրահմանաց Բանգալայ ձգեն զծագումն իւրեանց ։ իսկ 'ի ծառայից անտի նոցա՝ սերեցան ասի, Կայիշուքն ։

Բալալսէն ասի որդի Ադիսուրայ ։ Բայց անագան ուրեմն արտաքս պեղեցաւ ընդ արևելս Բանգալայ պղնձի տախտակ, որ փորագրեալ էր յաւուրս Վիդու թագաւորաց ։ Ուր գրէ ։ թէ հայր Բալալսէնայ էր Վիջուսէն ։ Այն Ակպարի ասէ, թէ Սուկսէն էր հայր Բալալայ ։ Բայց հաստատութիւն կայ՝ թէ Ադիսուր ոչ էր հայր Բալալայ ։ զի նա հրաւիրեաց զհինգ բրահմանս 'ի Կանուջայ ։ և Բալալսէն, յորժամ սերունդքն բազմացան ։ ասի բաժանել զնոսա յաստիճանս ։ և հաստատել զկարգ Կուլինաց ։ Որպէս կարէին Բրահմանք բազմանալ այսքան ։ ընդ միով թագաւորութեամբ ։ Վասն այսորիկ, եզրակացուցանեմք թէ Ադիսուր ոչ էր հայր Բալալայ ։ բայց թէ յառաջընթաց գերդաստանի ուրումն ։ և թէ՝ Վիջուսէն էր ճշմարտապէս հայր նորա և առաջնորդ այնր արքայական զարմի ։

Բալալսէն առասպելի լինել որդի Բրահմապուտրայ գետոյ, որ զգեցաւ զկերպարանս բրահմանի ։ Էր մի 'ի զօրաւոր թագաւորացն Բանգալայ ։ և ասի թագաւորել զամս յիսուն ։ Կայր ընդհանրապէս 'ի Վիկրամպուր՝ մօտ 'ի Սունարգօնգ, որ համարէր մայրաքաղաք երկրին ։ բաժանեաց զբրահմանս 'ի Կայիշտայ՝ 'ի զանազան աստիճանս՝ որք կան տակաւին ։ Զառաքինագոյնս 'ի նոցանէ արար կուլինս ։ բայց դժբաղդութեամբ ժառանգական արար զաւագութիւնս նոցա ։ որով և 'ի մեծ թշուառութիւն դարձոյց զկեանս աշխարհին ։ քանզի արդի կուլինք ունին զամենայն պատիւ, բայց զսակաւ առաքինութիւն զնախնեաց իւրեանց ։ 'Ի ժամանակի նորա երկիրն բաժանեալ էր 'ի չորս մասունս ։

1 Բարանդրօն՝ ընդ Մահանանդաւ՝ յարևմուտս ։ Պատմայ՝ (Պանդէս) 'ի հարաւոյ ։ Կուրուտօյա՝ յարևելս ։ և այլ իշխանութիւնք 'ի հիւսիսոյ ։

2 Բանգու՝ յարևմուտս 'ի Կուրուտոյոյ զԲրահմապուտրա ։ Մայրաքաղաքն Բանգալայ էր Վիկրամպուր, զոր որպէս ասացաք, հուպ էր առ Դաքքայ, և անկանէր 'ի Բանգու ։

3 Բագրի՝ դեղդա՝ որ կոչի ևս Դըուիպա՝ կամ կղզի, ունէր յերից կողմանց զԲագարատտի յարևմուտս ։ ըզ Պադմա յարևելս ։ և զծով 'ի հարաւոյ ։

4 Րահրի ։ ունէր զԲագարատտի և Պադմա 'ի հիւսիսոյ և յարևելից, և զայլ և այլ թագաւորութիւնս ընդ արևմուտս և ընդ հարաւ ։

ՄԵԼՔՈՒՄ Յ. ՍԱՐԳԻՍ ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

## ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ։

ՀԱՐՑ ։ Ուստի՞ է սկիզբն զառաջին բնակչաց Մեծին Բրիտանիոյ ։

ՊԱՏԱՍԽԱՆ ։ Սկիզբն նոցա ոչ գտանի ստուգութեամբ, առաջին պատմութեան այսր երկրի որպէս և այլա-

մնեցուն, լինելով մեծապէս անօրոշ և առասպելական ։

Հ. Զի՞նչ է հասարակ կարծիք յաղագս առաջին բնակչաց այսր կղզւոյ ։

Պ. Առաւելագոյն հասարակ և յիրաւի միայն հաւանական կարծիք է այն թէ՝ Բրիտանիա ժողովրդեցաւ ի պէսպէս ժամանակս և ի զանազան մասանց ցամաքին Եւրոպիոյ. բայց որոշ ժամանակն յորում առաջին բնակութիւնն եղև՝ անծանօթ է ։

Հ. Ո՞րք են նախնագոյն ծանօթութիւնք Բրիտանիոյ՝ որոց հաւանութեն տալ կարեմք ։

Պ. Նախկին ընկալեալ ծանօթութիւնք են թէ գաղթական հպատակք Տեւտասայ թագաւորին Կեղտաց, մտանելով ի ծովեզրէն Գաղղիոյ, եկին ի ցամաք և հաստատեցան առանց հակառակութեան ի ծովեզերեայս մեծին Բրիտանիոյ. (Տես զԱշխարհացոյցն.)

Հ. Յի՞նչ մտս արարին Կեղտք ըզհաստատութիւն 'ի ծովեզրն մեծին Բրիտանիոյ ։

Պ. 'Ի մտադրութիւն աճեցուցանելոյ և տարածելոյ իւրեանց զվաճառականութիւն. առ որ ձգէին և քաջալերէին 'ի ձեռն ինքնակալի իւրեանց. որ վասն սիրոյ վաճառականութեան և օգտից ժողովրդոց իւրոց՝ կոչեցաւ Մերկուր կամ վաճառական. և աստի է զի ունիմք զանուն վաճառականի ։

Հ. Ո՞յք նոյնպէս հաստատեցին զինքեանս ի Բրիտանիա ։

Պ. Բէլգեանց գաղթական 'ի հիւսիսային գաւառացն Գաղղիոյ (Տես յաշխարհացոյցն.

Հ. Ուստի՞ էր սկիզբն Կեղտաց և Բելգեանց ։

Պ. Այն երկու ազգք Գաղղիացւոց որ կարծէին ծագել ի Գամերայ, որդւոյ Յաբեթի, կրասեր որդւոյ Նոյի.

## ԳԼՈՒԽ Բ.

Հ. ԶԻ՞ՆՉ էր ընդհանուր երևոյթ նախնի Բրիտանացւոց ։

Պ. Բարձրահասակք էին, քաջ համեմատեալք և յաղթանդամք. ներկէին զմարմինս իւրեանց ծովային բուսովն որ կոչէր Ուոյտ. որ ո՛չ միայն պաշտպանէր զծակոտիս մորթոյ յանգթութենէ ձմերան, այլ և տայր նոցա ուժգին և ահաւոր տեսութիւն քաջասիրտ պատերազմասէր և մեծանձն մարդկան, համարեալ էին և մանաւորաբար, վասն համեստութեան և հաւատարմութեան իւրեանց ։

Հ. Զի՞նչ էր սովորական զգեստ նոցա ։

Պ. Գլխաւոր արանց էր տեսակ ինչ մասամբ իւիք ներկեալ պատմուճանի, որ իջանէր 'ի միջաց մինչև 'ի կէս սրունից. բայց զայս բերէին արտաքուստ. քանզի ոչ երբէք թէ նոքա ունէին զգիտութիւն ձեռակերտելոյ զբուրթ ։

Հ. Զի՞նչ էր սովորական զգեստ նոցա՝ որք ունէին զպաշտօն արժանաւորութեան, որպէս առաջնորդ, իշխան և այլն.

Պ. Արտաքոյ որոց ստորագրեցանն՝ կրէին զմանեակ ոսկի շուրջ զպարանոցօք իւրեանց, և կանայք արկանէին զապարանջանս 'ի մետաղեայ ։

Այլ ընդհանրութիւն նախնի Բրիտանիոյ չունէր զայլ միւս ծածկոյթ քան զմորթ վայրենի անասնոց. և ոչ զայլ զարդս՝ քան զխոշոր նկարումն ծաղկանց և ձևոց անասնոց 'ի զանազան մասունս մարմնոց իւրեանց ։

Հ. Ստորագրեա՛ զբնակութիւն Բրիտանացւոց այսոցիկ ։

Պ. Էին տեսակ ինչ հիւղից կամ խրճթաց, երբեմն յօրինեալք 'ի չառաւիղաց, ըստ կերպի սարփինայից. և

երբեմն ի շաղախոյ և ի կաւոյ համեմատ եղանակաց տարւոյն , և հասարակապէս ծածկեցեալք ծղօք .

Հ. Զի՞նչ էին քաղաքք և գիւղք նոցա .

Պ. Կայանային 'ի թուոյ յայսոցիկ խրճթոց , անկանոնաբար տեղաւորելոց փոքր մի հեռաւորութեամբք 'ի միմեանց , և հասարակօրէն կառուցելոց յանտառս , վասն յարմարութեան որսալոյ . որ սերելն և հարկաւոր զբօսանք էր ժողովրդոց .

Հ. Որգեօք նախնի բնակիչք Բրիտանիոյ սահմանէին զինքեանս ի մասնաւոր ինչ տեղի , թէ շրջէին աստ և անդ նման թաթարաց ներկայ ժամանակիս .

Պ. Նախնի Բրիտանացիք նման թաթարաց յածէին ի տեղւոջէ ի տեղի կարգէին բանակս համեմատ զանազան եղանակաց տարւոյն . յամառն ընդհանրապէս բնակէին յառատաբեր ձորս՝ որ տային զմեծ առատութիւն արօտի և ջրոյ արջառոցն . ի ձմեռային ժամանակի դառնային յերկիր բլրական , որպէս ի չոր և յառաւել առողջարար .

Հ. Զի՞նչ էր սովորական կերակուր բնակչացն Բրիտանիոյ յառաջ քան զԲելգեանց հաստատել 'ի մէջ նոցա .

Պ. Կաթն և միս այնպիսի անասնոց զորս որսային . սովորական ըմպելին նոցա էր ջուր . Բայց յորժամ Բելգիք եկին ի Գաղղիոյ՝ բերին ընդ ինքեանս ըզտակաւ ինչ գիտութիւն երկրագործութեան . և փոխ թողլ ուսուցին ներքին բնակչաց զարհեստ մշակելոյ զերկիր այնպէս՝ մինչ բուսուցանել զցորեան հարկաւոր վասն կազմելոյ զայն առողջարար կերակուր՝ զոր մեք կոչեմք հաց .

Ո՛յք էին ներքին բնակիչք

Պ. Կելտք . որք թողին զծովեզրն , յաջորդել ի մէջ նախնի Բրիտանացւոց .

Հ. Յորմէ՞ կազմէին նախնի Բրիտանացիքն զհաց .

Պ. Երբեմն ի ցորենոյ միայն , բայց սովորաբար 'ի ցորենոյ , ի հաճարոյ , և 'ի գարւոյ խառնեցելոյ 'ի միասին .

Հ. Զի՞նչ էր կառավարութիւն նախկին Բրիտանացւոց .

Պ. Նահապետական , գլխաւոր իւրաքանչիւր գերդաստանի լինէր պատասխանատու մեծաւոր ցեղին վասն գնացից բովանդակ գերդաստանին .

ԳԱՍՊԱՐ Յ. ՍԱՐԳԻՍ.

## ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

### ՑԱՄՐ .

1 Յամրն է կենդանի՝ այսպէս անյարմարապէս ձևացեալ 'ի շարժել , մինչ հազիւ կարողանալ յառաջանալ առաւել քան միով քայլիւ յընթացս շաբաթու միում .

Քանզի ճշմարիտ այսպէս դոյզն փափագ ունի փոխելոյ զտեղի իւր՝ մինչ ոչ երբէք կարծի գնալ ի խնդիր կերակրոյ՝ մինչև ոչ սովիցի ի քաղցոյ և ծարաւոյ .

3 Ապրի տերևօք , պտղովք , և ծաղկօք ծառոց՝ և ստէպ կեղևօք , որ ոչ ինչ այլ թողեալ իցէ վասն կերակրոյ .

4 Որովհետև կարօտի շատ մեծ քանակութեան կերակրոյ 'ի պահպանութիւն իւր՝ ըստ մեծի մասին գերծու զբոլոր դալարութիւնն ծառոյ ի փոքր ժամանակի , քան զմին շաբաթ . և ապա առանց կերակուր մնալով 'ի վայր անկանի իբրև զանկենդան զանգուած ինչ յոստոց անտի ծառոյն , զորոյ եհան ինքնին զկենդանութիւն .

5 Յետ կալոյ առ ժամանակ մի յանշարժ կացութեան ի ցաւոց անկմանն՝

պատրաստել առաւ մասն նորոյ ճանապարհորդութեան դէպ յուրիշ այլ ծառ , առ որ այնքան դանդաղ սողայ , մինչ հազիւ ցոյց տայ եթէ շարժիցի ինքն բնաւ .

6 Վերջապէս ի հասանելն՝ եղանէ ընդ բուն ծառոյն և սպառէ զոր գտանէ յայս նորա . կրծելով նաև զկեղև ծառոյն՝ փութով կործանէ զնա . և այսպէս լինի զրկեալ յայնմ՝ ուստի գտանէր զապրուստ իւր .

7 Այս անասնոյր արարած՝ որ երևի վարել զկեանս չարաւոք յոյժ . մնացէ իբրև ճիշդ օրինակ ծոյլ մարդկան , որք ծախեն զժամանակ իւրեանց առանց գործելոյ զբարի ինչ . յորժամ խնդրել պիտէին զայնասիկ մխիթարութիւնս՝ որք առնեն զմարդն երջանիկ .

## ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ԵՐԿԱԹ

1 ԵՐԿԱԹՆ է յոյժ պինդ , ոչ է գեղեցիկ . բայց ես ոչ գիտեմ թէ զինչ պարտէաք առնել առանց այնր , զի առնէ մեզ զմեծ և զբազում ինչ . ունելեք և բրիչք և հրացանք շինին յերկաթոյ .

2 Երթ և հարց ցհողագործն եթէ կարէ գործել զերկիր առանց խոփի , Նա՛ , նա զինչ պատասխանէ . ասէ թէ ոչ կարէ . քանզի խոփն շինի յերկաթոյ .

3 Երկաթն հալի հրով . զի եր զթաթակեսցին և փորձեա լաւ . հալեցաւ ոչ . բայց է շիկացեալ . կակուղ և կռանոյ . բայց ասեմ քեզ Այո , երկաթն հալի ի մէջ շատ շատ ջերմ հրոյ , երբ երկար ժամանակաւ մնայ՝ յեռ այնու հալի .

4 Եկ . երթիցուք ի դարբնոց անդր . զինչ գործէ նա . ունի զմին բով . փչէ զհուրն մին մեծ դոյդ փքովք՝ զի ջեռուսցէ զերկաթն . —

5 Այժմ ջերմ է , այժմ հանէ արտաքըս ունելիօքն , և դնէ զայն ի վերայ սալի . Այժմ ծեծէ զնա մուրճով . որպէս ուժգին զօրէ , Այսպէս թռանին , գեղեցիկ և փայլուն կայծակունք , Ո՞ ինչ դարբինն գործեսցէ . գործէ զգամս և պայտս ձիոց և բազում այլ իրս . —

Պողպատն շինի յերկաթոյ . պողպատն է շատ փայլուն և կարծր , դանակք, և մկրատք կազմին ի պողպատէ .

ՅԱՆԳԼ. Կ. Գ. ՇԻՐԽՕԹ .

## ՈՐՈՏ ԵՒ ԿԱՅԾԱԿՆ

ՈՉ գոյ ամենևին անձրև 'ի ժամանակաց հետէ . գետինն չոր է յոյժ և կածր . խոտ և տունկք կիզեալ են յարևոյ .

Արևն ոչ փայլէ այժմ . բայց յոյժ ջերմ է , մանաւանդամայն և օժանդակին հողմք չշնչեն . տերևք 'ի վերայ ծառոց ամենևին ոչ շարժեն , Հաստատ թխն երևի յոյժ սեաւ . և զիարդ մթին է այն ,

Ահա փայլական լոյս . որ ցոլանայ 'ի մէջ սենեկի իմում , Այժմ 'ի բաց գնաց . երկար ոչ տևեցաւ , Ո՞ ինչ է այն , Այն էր փայլակն ,

Այժմ փայլէ վերստին , Ո՞ ինչ ձայն լսէ անդր 'ի մէջ օդոյն՝ ուղղակի 'ի վերուստ գլխոյ մերոց .

3. Այն է Որոտումն . սկսանի անձրևել , Ա՛ զիարդ մեծամեծ լինին կաթիլքն . երագ անձրևէ , Երբեմն պատահի , զի փայլակն անկանի 'ի վերայ մարդկան կամ կենդանեաց՝ և սպանէ զնոսա , Որոտումն յոյժ ահարկու առնէ զմեզ . բայց չար ոչ առնէ , Տեսանեմք զփայլակն , և զկնի սուղ ինչ ժամանակի լսեմք զձայնն . Նոյնպէս . յորժամ կրակեն զհրացան հեռի 'ի մէնջ նախ տեսանեմք զփայլումն , և ապա լսեմք զձայնն , Այս է , զի լոյս արագեւս ընթանայ՝ քան ձայնն ,

Յ. Մ. ԹՈՐՈՍ .

ԳՐԱԴԱՐԱՆ
ССР

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿԻՐՍ գրեթէ գնտաձև է նման նարնջի ։

Զանազան ապացոյցք կան՝ որ երկիրն ո՛չ է տափարակ ։

1 Յորժամ նաւ գայ դէպ յափն ծովու մեք նախ գտանեմք զտեսութիւն առագաստից նորա՝ այնինչ զանգուածն տեսանի ընկղմեալ ՚ի մէջ ջրոյ, և սակաւ առ սակաւ յառնել ՚ի վեր՝ մինչ նաւն մօտ հասանէ ։

2 Մարդիկ շրջանակելով զառագաստատել նաւուն յարևելս կամ յարևմուտս՝ յետ գան կրկին ՚ի տեղին՝ ուստի ելին ։

3 Ստուերն զոր երկիր ձգէ ՚ի վերայ լուսնի՝ միշտ բոլորակ է. և ոչ ինչ բայց եթէ գունտ կարող է տալ զայսպիսի ստուեր ամենայն դիրս ։

Երկիրն գոգցես ութն հազար մղոնք է ընդ մէջ. և քսան և հինգ հազար մղոնք ընդ շրջապատն ։

Երկիրն երկու շրջան ունի. առաջինն՝ զի պտուտի, և երկրորդ՝ զի յառաջ ընթանայ, իբրև զնարինջ գլորեալ ։

Այն ժամանակն, զոր առնու երկիր ՚ի շրջելն ՚ի վերայ առանցին, կոչի օր ։

Օրն բաժանեալ է ՚ի մարդկանէ ՚ի քսան և չորս հաւասար մասունս. որք կոչին ժամք ։

Երկրի շրջելն է որ պատճառէ զլոյս և խաւար յաջորդել միմեանց փոխ փոխ ։

Ցորչափ Երկիրն ճեայ յանդիման արևոյ՝ է տիւ, կամ որ հասարակապէս կոչի օր. յորժամ շրջմամբս երկրի մակերևոյթըն դառնայ յարեգականէ՝ կոչի գիշեր ։

Երկիրն ոչ ընթանայ ուղղակի. այլ յառաջ շարժի շուրջ զարեգակամբ 95 միլիոն մղոնօք հեռի ՚ի նմանէ՝ ՚ի ձուաձև շրջանակի. որ կոչի թերաշրջանակ ։

՚Ի 365 աւուրս և ՚ի 6 ժամս յետ թողլոյ զոր և իցէ կէտ այսր ճանապարհի, վերստին հասանէ երկիրն ՚ի մի և նոյն կէտ. այս ժամանակ է տարի ։

Շաւիղ երկրի կոչի շրջանակ իւր. շարժումն նորա ընդ մէջ այսր շաւղի կոչի տարեկան շրջան, և պտոյտքել նորա ՚ի վերայ առանցին՝ կոչի օրական շրջան ։

Երկիրն պտուտի ՚ի վերայ մտացածին գծի՝ որ անցանէ ընդ մէջ իւր ցմիւս կողմ ՚ի մակերևութի իւրում. այս գիծ կոչի առանցք նորա ։

Մի ծայր առանցից երկրի է հիւսիսային բևեռն, հանդիպակաց ծայրն է հարաւային բևեռն ։

Հիւսիսայինն արուեստահնար գնտոյ է՝ որ սովորաբար բարձր ճեայ յաշխարհացոյցս. հիւսիսայինն միշտ անկանի ՚ի գլուխ աշխարհացուցին ։

Միւս շառաւիղք՝ կամ որ կոչին Օտարք կողմնացուցի, յարաբերութբ հիւսիսայնոյն՝ են որպէս ՚ի ներքոյ ։

ԱՆԳՂ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՄԿՐՏԻՉ.

## ԱՄԵՐԻԿԱ

ԱՄԵՐԻԿԱ գտաւ ՚ի Քրիստափորէ Կոլոմբոսէ. յամին 1492 Կոլոմբոս ծնաւ յԻտալիա. Երբ նա յառաջ ՚ի ծովեմուտ էր ՚ի չորեքտասան ամաց հասակի. Եւ էր իբրև յիսուն և եօթն՝ յորժամ եգիտ զԱմերիկա ։

Առագաստեաց ՚ի տեղւոջէն ՚ի Սպանիա, որ կոչի Փալոս, Փալոս անկանի ուղիղ ընդ արևելս քաղաքին Յակոբոսի ՚ի Վրգինիա. Կոլոմբոս եկն յԱմերիկա երեք նաւօք, որք էին փոքրիկ նաւք. Բայց մի ՚ի նոցանէ ունէր զկատարեալ յարկ. Նոքա կոչէին Սանտա Մարիա, Պինտա և Նինա. Սանտա Մարիա էր մեծագոյն. և մին՝ յորում Կոլոմբոս ինքնին նաւարկէր ։

Ովկիանոս ընդ որ Կոլոմբոս էանց՝ էր Ատլանտեանն. որ է երեք հազար մղոնօք լայն։ Ոչ ոք էանց ընդ այս Ովկիանոս նախ քան զԿոլոմբոս. Զամիսս երկուս կատարեաց նա զնաւարկութիւնն։

Երկիրն, զոր յառաջ եգիտ, էր կղզի մի. զոր եգիտ բնակեալ ի Հնդկաց. զոր նոքա կոչէին Գուանահանի։ Կոլոմբոս ետ նմա զանունն Սան Սալվադօռ. որ է մեծ իմն կարկառ կղզեաց կոչեցելոց Բահամայք. յԱշխարհացոյցս առաջիկայ դարուս՝ կոչի այն կղզի կատուի։

Յետ այսր գիւտոյ՝ Կոլոմբոս արար պէսպէս միւս նաւարկութիւնս. 'ի 1498 եգիտ նա զկիսագունտն. Կոլոմբոս մեռաւ 'ի 1506 յորժամ նա էր իբրև եօթանասուն ամօք ծեր։

Այժմ որ դու գիտես զառաջին դասն, ասացից քեզ զպատմութիւն մի։ Ուսեալ էք թէ զիարդ Կոլոմբոս եգիտ զԱմերիկա։ Յառաջ քան զայս ժամանակ մարդիկ յայլ աշխարհս ոչ գիտէին թէ էր այնպիսի երկիր՝ որպէս է Ամերիկա.

Զիարդ ապա Կոլոմբոս գիտէր թէ անդ իցէ այսպիսի երկիր. նա ոչ գիտէր։ Բայց խորհեցաւ թէ պարտ էր լինել 'ի կշռորդել զերկիր ընդ արևելեան կիսագնդոյն, և ասաց զկարծիս իւր ոմանց իմաստնոց Եւրոպիոյ. բայց նոքա սակաւ մտադրութիւնս ընծայեցին նմա։

Վերջապէս այցեաց Սպանիայ, թագաւոր և թագուհի քաղաքին ընկալան զնա սիրով, և հաստատեցին յարմարել արտաքս զերիս նաւս, յորս Կոլոմբոս առագաստելոց էր 'ի գիւտն։

Այս էր համարձակ իմն ձեռնարկ։ Չէր նաւ ինչ որ էանց ցայն վայր յԱտլանտիկն։ Բայց Կոլոմբոս սրտեայ էր, և իւր մարդիկն ևս էին նոյնպէս։

Զվաթսուն աւուրս առագաստեցին նոքա դէպ յարևելս. բայց ոչ կարացին գտանել զերկիր։ Եւ այժմ նաւավարքն աղաղակեցին։ Զարհաւրելին խորհիլ 'ի վերայ հեռաւորութեան՝ զոր հատին. և երկնչէին թէ ոչ կարեն դառնալ երբէք. Քաջութիւն Կոլոմբոսի միայն մնաց պինդ. և նա ետ 'ի մտի յառաջ վարել զնաւն, ընդդէմ ահի և գանգատի նաւաստեայն. զայս նա պարզաբար ծանոյց նոցա։

Ի երեկոյ փութանակի զկնի, ցոյցք ցամաքի երևեցան։ Կոլոմբոս հրամայեաց կրկին պահապանս դնել։ Բայց ոչ ոք կարէր քնել։ Կոլոմբոս ինքնին եկաց 'ի ձեղուան անդր, բայց խոկոյն զգաց զնեցութիւն իմն, լուաւ զձայն աղաղակի 'ի նաւէն Պինտայ. Զինչ կարէր նշանակել ձայնն։ Տակաւին բարձր ձայն եկն. աղաղակն էր "Երկիր, Երկիր." Միրտ Կոլոմբոսի հարաւ ուրախութեամբ, և նաւաստիքն լցան ուրախութեամբ։ Յորժամ առաւօտ եկն, երկիրն լի տեսլեամբ առաջի նոցա ընծայէր։ Կոլոմբոս հաւաքեաց զմարդիկն շուրջ զիւրև, և ընդ նոցա գոհացաւ զԱստուծոյ, յետ որոյ երգեցին զերգս գովութեան։

Կոլոմբոս շուտ եհաս 'ի կղզին՝ զորոյ բնակիչսն եգիտ՝ զի էին Հնդիկք։ Նոքա երբէք չէին տեսեալ զճերմակ մարդ յառաջն։ Զարմանային տեսանել զԿոլոմբոս և զմարդիկ նորա. բայց յապուշ կրթէին ընդ տեսիլ նաւաց, և ընդ հուր և որոտումն թնդանօթաց նորա։

Յորժամ Կոլոմբոս բաւականապէս կշռեաց զերկիրն, առագաստեաց դառնալ. բայց մրրիկ ծովու եկն, և ահարկութիւնք ալեաց կացին որպէս լերինք։ Կայմք շարժիլ սկսան, առագաստքն պատառեցան, և բոլորովին տուեալ լինէր 'ի կորուստ։

փոքրիկ նաւք ջանային ընդդէմ ալեացն. լեռնացեալ, վիրացեալ, կային. խորտակեցան 'ի ծով. վիրաւորին եղեն դարձեալ և մեռեան. Միջերջակէս մրրկին դադարեցաւ. Աստուած պահեաց զնաւս, Եւ այժմ 'նոքա զնացին զճանապարհ իւրեանց, և յետ սաստկանալոյ զբազում աւուրս և շաբաթս' հասին անարատ 'ի Ամերիկա. և անդ առացին զնոր աշխարհն' զոր խնդրեանք գտեալ էին. ՃԱՓ.Հ.

ՍՏԵՓ. Յ. ՄԱՆՈՒԿ.

## ՎԷՊՔ ՎԻՊԱՑ

Ա. ՅԵՏ ստեղծման երկրի, արար Աստուած զառաջին մարդն և զկին, յորոց ամենայն ազգք մարդկան իջանեն. Անուն մարդոյն էր Ադամ, և կնոջն' Եւա. բնակէին 'ի դրախտին Եդեմայ, որ կարծէր անկանել յերկրին' որ այժմ կոչի Հայաստան.

Բ. Բայց յետոյ անհնազանդ եղեան պատուիրանին Աստուծոյ, ածին 'ի վերայ իւրեանց զբարկութիւն նորա, վասն որոյ վանեցան 'ի դրախտէն Եդեմայ. և անկան 'ի ներքոյ տկարութեանց և մահու. յորոց յառաջն էին ազատք.

Գ. Տղեքն Ադամայ և սերնդոց նորա եղեն լինել երկարագոյն յոյժ. Նա ինքն ասի կեալ զինն հարիւր և զերեսուն ամս. ուստի ազգ մարդկան աճեցան յոյժ յոյժ. Յայնասիկ վաղ ժամանակէն 'ի վեր ուսան մարդիկ զերկրագործութիւն, ածին զարջառս, շինեցին զքաղաքս, և ծանօթացան արհեստին գործելոյ զհրահանգելիս.

Դ. Այլ' ազգ. մարդկան, եղեւ թէ ապականեցաւ փութով, և հասեալ յետոյ չարութիւն նոցա այնպէս մեծացաւ մինչ Աստուած վճռեաց կործանել զբովանդակ զարմն մարդկային ջրհեղեղաւ. բայց 'ի մարդոյ միոյ և յընտանեաց նորա.

Ե. Այս մարդ էր Նոյ. որ աստուածային հրամանաւ կազմեաց զտապան մի. յորում նա և ընտանիք իւր մնացեալ փրկեցան. Այս տապանն մինչ կարծի լեալ իբր երեք հազարամօք յառաջ քան զՔՐԻՍՏՈՍ.

Զ. Պահպանեալ Նոյի կայանայր 'ի կին իւր, յերիս որդիսն. և 'ի կանայս նոցա. Անուանք որդւոց նորա էին Սեմ, Քամ և Յաբեթ. Կարծի թէ սաւերագոյն մասն ազգաց Ասիոյ իջեալ քեն 'ի Սեմայ. Ափրիկեցիք 'ի Քամայ. և եւրոպացիք 'ի Յաբեթէ.

Է. Յետ ջրհեղեղին երբ ջուրքն զնացան. տապանն հանգեաւ 'ի վերայ լերին Արարատայ 'ի Հայաստան. սերունդք Նոյի բաժանեցին զինքեանս և սկսան բնակել 'ի զանազան կողմանս երկրի. ոմանք գնացին ընդ հարաւ յԱսորեստան. ոմանք ընդ արևելս 'ի Պարս' 'ի Հնդկաստան և 'ի Չին. Ոմանք ընդ յարևմուտս կոյս դէպ 'ի փոքրն Ասիա, և անտի յԵւրոպա. և այլք ընդ հարաւ արևելեան' դէպ յԱսորիս և յԵգիպտոս.

Ը. Երկնաքանչիւր գերդաստան, երբ բնակէր 'ի նոր երկրի, վաղվաղակի ածէր կացուցանէր զցեղ իւր. 'ի միոյ ցեղէ մի ոք շատ տոհմ կազմէին. և միաւորութիւն բազում ցեղից կարգէր զազգ մի. Առ 'ի մին 'ի ցեղիցն լինէր այր մի. որ գերազանցէր զամենայնսն մեք 'ի քաջութեան և յիմաստութեան. կամ 'ի ծննդեան և 'ի հարստութեան. Այսպիսի այր փութով լինէր գլուխ կամ իշխան ցեղին ուրուք.

Թ. Յորժամ բազում ցեղք միանայէին 'ի մի ազգ' յայնժամ իշխանհարուստ կամ քաջագոյն ցեղին լինէր թագաւոր բոլոր ազգին. Այլին ճանա-

պարհաւ թագաւորութիւնք և միաբանութիւնքն կացին ։ Նմանք 'ի թագաւորացն զօրաւորագոյնք էին քան զայլս · այսոքիկ թագաւորք յարձակէին 'ի վերայ տկարագոյն մերձաւորաց և հնազանդեցուցանէին զնոսա . սովին եղանակաւ կայսրութիւնք կանգնեցան ։

Առաւելագոյն քաղաքավարեալն յայսոցիկ հին թագաւորութեանց էր Եգիպտոս · ժողովուրդք բաժանեալ էին 'ի չորս կարգս · յանուանէ՝ 'ի քահանայս , 'ի զինուորս , յարհեստաւորս և 'ի մշակս ։ Թագաւորք Եգիպտոսի ունէին զմեծ կարողութիւն և զանհուն հարստութիւն , Բազումք 'ի վաղեմի Եգիպտական շինուածոց կան ցայսօր ժամանակի , և յորդորեն զզարմանս ճանապարհորդաց ահագին մեծութեամբք իւրեանց ։

։Անգղիարէնէն

ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏԻՉ Մ. ՅՈՎԱՆ ։

## ԲԱՐՈՅԱԿԱՆ
### ՀՕՐ ՅԻՇԱՏԱԿՔ

ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ։ Մի՛ խռովեր վասն այնր՝ զոր ո՛չ կարես խափանել · եթէ իցէ այն մեղք քո՝ մի՛ ևս առներ ։

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆ է զղջումն ,

ԹՇՆԱՄԻՔ ։ Վրէպ ո՛չ է լինելոց քեզ գովել և նմանօղ ևս լինել թշնամւոյ քում , յորում ինչ և գերազանց իցէ նա ։

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ ։ Մտածեր , թէ զոր ինչ դու ունիս լինէր այլում , եթէ այնպէս հաճոյ լինէր Ամենակալին ։

ԹԻՒՐՈՒԹԻՒՆ ։ Եթէ ընդ անիրաւութեամբ անկանիցիս · զայնքան կա՛ քեզ զմարդոյն՝ մինչ իշխիցես դատապարտել կամ արհամարհել զայն ։

ՅԱՆՑԱՆՔ ԱՅԼՈՑ ։ Մի՛ հրատարակեր զյանցանս այլոց թէպէտև ճշմարիտ և ստոյգ՝ եթէ յայտնելն չհայեցի 'ի վախճան ինչ բարեգոյն քան զծածկելն ։

ՆԵՂՈՒԹԻՒՆ ։ Սովորեցո՛ դու զքեզ ինքնդ տանել սակաւ աշխատութեանց, և կրթութեամբ այնպիսի սովորիցես կրել զմեծագոյնսն ։

ԻՆՔՆԱԳՈՀՈՒԹԻՒՆ ։ Ջա՛ն բոլոր զօրութեամբ քով շատանալ 'ի քեզ ինքեան , և այն առնելոց է զքեզ բարեհաճ յամենայն 'ի վիճակս քո ։ —

ԻՆՔՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ։ Ամէն սիրտ է տիեզերք ազգաց · կարգաց և անհատից · լի բարեկամութեամբ, թշնամութեամբ · անզանազանութեամբ · լի էութեամբ և չէութեամբ · կենօք և մահու . անցելով՝ ներկայիւ և ապագայիւ · գարնամբ առողջութեան և գործեօք հիւանդութեանց ։ Ասա ուրախութիւն և տրտմութիւն , յոյս և երկիւղ , սէր և ատելութիւն ելևելս առեալ և ցնցեն զխոժոռ և զզուարթն , զդիւցազունն և զերկչոտն զհսկայն և զթզուկն , զտգեղութիւն և զփրունութիւն ։ Յանդադար ալիս գըտանես զամենայն 'ի ներքս 'ի քեզ զոր ինչ միանգամ և գտանես արտաքոյ ։ Թիւ և վարք բարեկամաց ներսայնոց բերեն զճշմարիտ նմանութիւն արտաքնոցն քոց · և ներքին թշնամիք այնքան բազումք են , այնքան ոխերիմք , և այնքան անհաշտք , որքան և արտաքոյքն ։ Տեսարանն՝ որ շուրջ պատէ զքեզ , է մոգական հայելին աշխարհի և ձևոց նորա 'ի միտս քո՝ յորոց պայծառագոյնն՝ ես դու ինքնդ ։ Որքան պայծառք են բարեկամք քո · այնքան ապականեալք են և թշնամիք քո ։ Հաւաստի լեր ուրեմն թէ վասն կատարելապէս ճանաչելոյ զքեզ՝ ունիս միայն առաջի արկանել քեզ զճշմարիտ հանգամանս որոց սիրեցին , կամ ատեցինն զքեզ ։

ՍՏԵՀԱԿՈՒԹԻՒՆ. Եթէ դու այսպէս դժուարահաճ ես՝ մինչ հարցանել զամենայն բան զոր լսես խօսեցեալ ընդ-քէն՝ ունելոց ես զսակաւ բարեկամս, փոքր հանճար, և զմեծ աշխատութիւն.

ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ. Ջանա՛ առնուլ առաւել հաճութիւն ի գիտելդ՝ թէ ամենայն աշխարհ ունի զքեզ այնպէս. վասն զի՝ արդարութիւնն կայ ի վերայ իւրոյ ինքեան.

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ. Ծառայեա՛ Աստուածոյ ի մանկութեան քում, յորժամ ունիցիս շունչ և կարողութիւն. ընդէր պիտի նմա ունել զդիւի մնացորդն, այն զի՝ դու անցեալ զաւուրբք ոչ ևս կարիցես մեղանչել.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եթէ դու կամիցիս պահել զծանօթութիւն, և սակայն ոչ ընդունել զնա ի ներքին բարեկամութիւն, արա նմա զբարիս. բայց պահեա՛ զխորհուրդս քո ՚ի նմանէ.

ՔԱՂՑՐԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ. Լեր քաղցրաբարոյ. զի ճշմարտիւ պահեսցիս ընդ վիճակ քոյ, զանզի և զարժանին յարգութիւն քո. ապա թէ ոչ՝ չէ այն քեզ խոնարհութիւն, այլ անամօթութիւն. և բերելոց է ի վերայ քո զանարգ կեղծաւորութիւն, Մերժեա զկեղծաւորութիւն.

ԿԻՐՔ. Սէր. Ջանա՛ ունիլ զսակաւ ինչ ընդ կրից քոց կամ ցանկութեանց՝ որքան և կարես. և աշխատեա՛ յամենայն զօրութենէ առնել զմարմին քո հետևող հոգւոյ քում.

ԽՐԱՏ. Մի՛ երբէք խրատ տար ՚ի ժամանակի զբօսանացն՝ որոց ընդդէմ կշտամբել կամիցիս.

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ. Յաջողել կարես առաւել մշակելով զայն՝ որ անզանազան է ՚ի քեզ յինքեան՝ քան նմանելով որոց գերազանցք լիցին յայլս.

ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ. Մի՛ ճակատ ցուցեր ՚ի կատակս՝ եթէ ոք ընկենուցու աղ բազում ՚ի քեզ՝ վնաս ոչ է, եթէ դու խօթ և խղճմտեալ ոչ լիցիս.

ՕՐԻՆԱԿ. Մի՛ դադարեր զհետ գնալ քաջագոյն օրինակաց, և յորժամ ոչ կարես հասանել լինել տէր ամենայն ցանկութեան քոյ՝ տակաւին յարատևեա՛ միշտ ՚ի ցանկութիւն քո.

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. Լինիցի մեծ իմն օգնութիւն պահել զքեզ ՚ի բարկութենէ. եթէ յիշեսցես թէ Աստուած հայի առ քեզ յայնմիկ իսկ ժամու.

Յորժամ ուղղեսցեն զքեզ մարդիկ՝ մի՛ բարկանայցես. վասն զի նա՝ որ պատժէ ՚ի բարկութեան՝ ոչ պահէ զմիջնորդն ՚ի մէջ առաւելութեան և նուազին. և զիջանի՝ յորժամ դադարիցեն կիրքն.

ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ. Մի՛ անարգեր զոք, այլ հայեաց ՚ի մեծաւորս քո՝ որպէս ՚ի հարս. ՚ի հաւասարս քո՝ որպէս յեղբարս. և ՚ի կրտսերս քոյ՝ որպէս յորդիս.

ՎԱՐՔ. Մի՛ խոնարհեցուցաներ զքեզ առաջի նոցա, որք ոչ հոգան զայդմանէ. հետևեա՛ այնոցիկ՝ յորոց մարթիս ակնունել բարեաց. Մարմնաւոր հաճութիւնք մարդոյ են սակաւք և կարճատեք համեմատեալ ընդ տանջանաց դժոխոց. և չկարեն բնաւ լինել արժանիք ցաւոց քոց՝ ի դատապարտիլդ վասն նոցա.

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ. Կարես առնել զքեզ առաւել ուսեալ ընթեռնլով. բայց գիտուն՝ գործելով միայն. Մի՛ վաներ զամենայն ժրութիւնս քո ՚ի դաստիարակութեանդ ՚ի սենեկի հոգւոյ քում, բայց քայլեա՛ արտաքս յաշխարհ անդր և կեա՛ց որպէս և խորհիդ.

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Մի՛ ՚ի բաց

ընկենուր զքաղաքավարութիւն քոյ 'ի վերայ անձանց՝ որք հպարտք իցեն՝ կամ ագահք. զի մին այնքան անմիտ է, որ խորէ միայն զիւր իսկ արժանիս. և միւսն այնքան անարգ՝ մինչ առնէ քեզ ո՛չ ինչ տեսակ հատուցման.

ԽՈՐՀՈՒՐԴ. Մի՛ կար 'ի կարծիս այլոց. այլ խորհեա՛ քեզէն. վարեա՛ց բանիւ և լոյս առ՛ւր խնամով 'ի ժանտախտէ մտաց, որ հաղորդէ զինքն ճանապարհաւ և վարուք այնոցիկ՝ ընդ որոց կենցաղավարիս.

Գ·ՈՒՏԱԿՑՈՒԹԻՒՆ. Վատ մարդիկ թշուառք են. Սակի ո՛չ կարէ 'ի լաւութիւն ածել զահափետս խղճի մտաց.

ՎԱՐՔ. Մի՛ յենուր կարծ յոյժ 'ի տկար կողմն. այլ հաճութիւն արա քեզ երկար կալ, ուր կարիցես հրամայել.

ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ. Նման պատահմանց լրաց համբերութեամբ սպասեա տնօրէնութեան նախախնամութեանն. Սնոտի է առաւել հոգալն.

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ. Որովհետև ո՛չ կարես լինել բովանդակապէս երջանիկ, զմասն բարի ընտրեաց, որ չես ամենևին թշուառ.

ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ. Յորժամ մեղանչես այլում, խորհեաց, զի արդարութիւն մարդկային միանգամայն և աստուածային յանդիմանեն զքեզ.

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— Հպարտութիւնն որպէս բաղկանայ յունայնութենէ և 'ի չար բնութենէ, որ հաստատէ զմարդիկ զարմանալ 'ի վերայ ինքեանց, և արհամարհել զայլս, նոյնպէս և պահէ զզօրութիւնս իւր երկարագոյն քան թէ որ օք այլ մոլութիւն. և սակաւ ուրեք կորնչի՝ բայց եթէ կենօք հանդերձ.

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ. Եթէ խոստովանիցիս զմեղս քո, և ո՛չ ուղղեսցիս՝ ծաղր առնես զԱստուած.

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. Զոր ինչ առաջադրես առնել՝ խորհեա՛ց արդարապէս և ժամանակեա՛ յարմարապէս. վասն զի՝ այդ ինքն է՝ որ տայ նմա զապահովութիւն և զփոյթ.

յԱՆԳԼԻԱԿԱՆԷՆ

ՄԵԼՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ Մ. ՅՈՎՀԱՆ

## ԽՆԱՄ ԵՒ ԲԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐՉԻՆ

Ահա՛ հովիւն հօտի, նա խնամէ զոչխարս իւր. նա տանի զնոսա 'ի պարզ աղբիւրս. նա առաջնորդէ նոցա 'ի դալար արօտս. Եթէ փոքրիկ գառինք վաստակեալ են՝ բառնայ զնոսա 'ի բազուկս իւր. Եթէ նոքա մոլորիցին, նա յետ բերէ զնոսա.

Բայց ո՞վ է հովիւ հովուին, որ հոգայ զնմանէ. ո՛վ առաջնորդէ նմա 'ի ճանապարհն որ գնալոց է, և եթէ մոլորիցի, ո՛վ բերէ զնա յետս.

Աստուած է հովիւ հովուին. նա է 'ի վերայ ամենեցուն. նա հոգայ վասն ամենայնի. Աշխարհ բովանդակ է փարախ ոչխարաց նորա. Մեք ամենեքեան հօտ նորա եմք. և բանջարք և կանաչ դաշտքն են արօտքն՝ զորս նա պատրաստէ վասն մեր:

Մայրն սիրէ զփոքրիկ մանուկ իւր, և դնէ զնա 'ի վերայ ծնկաց իւրոց. զօրացուցանէ զմարմին նորա կերակրով և զմիտս՝ գիտութեամբ. Եթէ նա հիւանդ իցէ՝ հոգայ զնմանէ՝ կաթոգին սիրով. նա զգուշանայ ուսուցանել նմա զիարդ լինել բարի, ուրախանայ յօրական աճումն նորա.

Բայց ո՛վ է ծնող մօրն, ո՛վ կերակրէ զնա բարութեամբ, ո՞վ զգուշանայ 'ի վերայ նորա գորովագութ սիրով, խորհի զնմանէ յարաժամ, Որո՞յ բազուկ է 'ի վերայ նորա պահպանել զնա 'ի փոր-

ձանաց. և եթէ նա հիւանդ է՝ ո՛վ բժշկէ զնա։ Աստուած է ծնող մօրն. նա է ծնող ամենեցուն. վասն զի նա արար զամենեսեան. ամենայն մարդ և ամենայն կին, որք կենդանիք են ՚ի մեծ և ՚ի լայն աշխարհիս՝ են մանկունք նորա։ Նա սիրէ զամենայն, բարի է առ ամենեսեան։

Թագաւորն իշխէ ժողովրդոց իւրոց. ունի ոսկի թագ ՚ի վերայ գլխոյ իւրոյ. և արքունական գաւազանն է ՚ի ձեռին իւրում։ Նա բազմէ ՚ի վերայ աթոռոյ. և առաքէ արտաքս զհրաման իւր. հպատակք նորա երկնչին առաջի նորա. եթէ բարի առնեն՝ պահպանէ զնոսա ՚ի վտանգէ. և եթէ չար առնեն՝ առնէ զնոսա կրել։

Բայց ո՛վ է թագաւորն թագաւորաց. ո՛վ հրամայէ նմա առնել զոր առնէ. որո՞յ ձեռք պահպանեն զնա ՚ի վտանգից. և եթէ չար գործէ՝ ո՛վ պատժէ զնա։

Աստուածէ թագաւոր թագաւորաց. պսակ իւր ճառագայթք լուսոյ. և աթոռ նորա ՚ի մէջ աստեղաց. նա է թագաւոր թագաւորաց, և Տէր տէրանց։ Եթէ ասէ մեզ կեալ՝ կեամք. և եթէ ասէ մեզ մեռանել՝ մեռանիմք։

Իշխանութիւն նորա է բոլոր աշխարհի վերայ. և նա տեսանէ զամենայն գործս՝ զորս ինքն արար։

Աստուած է հովիւն մեր, վասն որոյ հետեւեսցուք նմա։ Աստուած է հայր մեր՝ վասն որոյ սիրեսցուք զնա։ Աստուած է թագաւոր մեր՝ վասն որոյ հնազանդեսցուք նմա։

յԱնգղիաստանէն

ՅԱԿՈԲ Ա՛ՆԱՆԻԱ։



## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ՀՐԱՀԱՆԳ Համբակաց, և Բնական Իմաստասիրութիւն ՚ի Սիմոնէ Կարապետեան ցկէս և անդր հասեալ՝ եւ ՚նա. բայց կարէ՝ եթէ կամիցի՝ լրացուցանել զերկոսին ես.

Ճանապարհ Երջանկութեան ՚ի Յովհաննիսէ Շահնազարեան աւարտեալ է. և արժանի տպագրութեան եթէ ծախքն վճարիցին.

Պատմութիւն Հռովմայ աւարտեաց և եւ Եղիա Գ. Յովհաննէս. և քաջալերութեան յարգոյ Ռուան-դունցի մերաղնէեյն ապաստան մնայ.

Պատմութիւն Գաղղիոյ զրեթէ աւարտեաց Եղիա Առաքել, և եւ յուսումն նաւավարութեան.

Կենդանաբանութիւն, և առաւել քան զայն՝ Ռոպենսոն Համառօտ ՚ի Խաչկայ Թ. Ավետումեանց՝ պատրաստի տպագրել հասարակաց հանգանակութեամբ.

Յունաց պատմութիւն ՚ի Սիմոնէ Բիջան աւարտեալ է. Գործ արժանաւոր.

Պատմութիւն Բանկալայ ՚ի Մելքոմայ Յ. Սարգիս կիսատ մնաց. զի եւ նա յուսումն առևտրի.

Պատմութիւն Մեծին Բրիտանիոյ ՚ի Գասպարայ Յ. Սարգսեանց լրանայ յետ մի կամ երկուց ամսոց.

Հատուածական Թարգմանութիւն Կարապետի Գ. Մ. Շիրխօռեանց արդէն իսկ երևեցան, Թարգմանէ այժմ ՚նա զՆոր Մեղու ՚ի Վիմէն Քրիստոսէ.

Յարութիւն Մանուկ Թորոս դեռ ՚ի հատուածականս է.

Համառօտ Աշխարհագրութիւն Յովհաննիսի Դ. Մկրտչեանց մերձ յաւարտն մղի. յոյժ պիտանի դպրոցաց.

Ամերիկա ՚ի Ստեփանոսէ Յովսեփ Մանուկեանց ցկէսն եհաս.

Վէպք Վիպաց ՚ի Սարգսէ Մկրտիչ Ս. Յովհան սկսաւ յառաջնոյ Մարտի 1850 ամի.

Բարոյական Հօր Յիշատակք ՚ի Մելքումայ Մկրտիչ Ս. Յովհան, սկսաւ ՚ի 5 փետրուարի 1850 ամի.

Մանկեկ Յակոբ Անանիա, դեռ ՚նոր է.

☞ Այս շարժումն անդամոց Սիրելեաց Ընկերութեան յարգոյ վնոր իմն գաս Թարգմանչաց ՚ի մատաղատի աշակերտաց դպրոցիս. որոց զյառաջադիմութիւն մաղթելով՝ մնամ ազգիս հայոց.

Ամենախոնարհ ծառայ

Յ. ՇԱՀՆԱԶԱՐ.